

ՄԱՍԻՍ

ՃԱԲԱԹԱԹԵՐԹ

ԱԶԳԱՅԻՆ, ԳՐԱԿԱՆ, ԳԻՏԱԿԱՆ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ

ՏՆՕՐԷՆ-ԽՄԲԱԳԻՐ
ՆՆՈՎՈՒ ՍՐԲԷՆ

55ՐԴ ՏԱՐԻ. ՆՈՐ ՇՐՋԱՆ

ԹԻՒ 16

10 ՄԱՐՏ 1907

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Տիգրան Ճիվեկեան

«Աշուղ»-ը, Յ. Զիննիրենեան, Յ. Ոսկան

Ռեմի Տը Կուլմոն

Զիւնոս Գիւլեր (Մեքրուած)

Սարա Պերնադի Կեանքեան

Լոնկժէլլօի Հարիւրամեակը

Փրոնիկ

ԱՐՇԱԿ ԱԼՊՅԱՃԵԱՆ

ԱՐԱՄ ԱՆՏՈՆԵԱՆ

ԱՐՏԱՇԷՍ ՅԱՐՈՒԹԻՆԵԱՆ

ՄԵՐՈՒԺԱՆ ՊԱՐՍԱՄԵԱՆ

Կ. ՊՈԼԻՍ

ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ ՍԱԳԱԵԱՆ

1907

UNIVERSITY

LIBRARY

OF THE

STATE OF

NEW YORK

ALBANY

1887

1887

1887

1887

1887

1887

1887

1887

1887

1887

1887

1887

1887

1887

ՊԱԼՔԱՆ

ԱՌՍՆՁՆԱՇՆՈՐԶԵԱԼ ԱՊԱՀՈՎԱԳՐՈԿԱՍՆ ԸՆԿ

Դրամագլուխ և սրահետ Ֆրանք 9,500,000
Վերապահովագրական

գրամագլուխ և սրահետ » 142,740,00

ՊԱԼՔԱՆ Ընկերութիւնը կ'ապահովագրէ հրդեհի դէմ ամէն տեսակ կահ կարասի եւն. , Կ. Պոլսոյ և Թուրքիոյ գլխաւոր քաղաքներուն մէջ շատ դիւրամատչելի պայմաններով . իսկ իր միւս երկրորդ ճիւղը անմրցելի գիներով և պայմաններով օժտուած է . կը կատարէ խառն ապահովագրութիւն , ընտանեկան , մանուկներու , եւն. եւն. :

Ընդհանուր գործակալ Թուրքիոյ ԱՐՇԱԿ ՈՒՆՃԵԱՆ

Ղալաթիա, Տեօյլեօ Օրիէնդ Պանքի կից, Սինասոն Խան. (2)

Հանգուցեալ Կարապետ էֆ. Իւթիւճեանի Թարգմանած հետեւեալ հետաքրքրական գիրքերը կը ծախուին բոլոր հայ գրավաճառներու քով . կեդրոնատեղի Աշտնա գրատուն :

Ընտանեկան Դաղտնիքներ Յ հատոր

15 Ղրշ .

Արուարձանին Տղան Յ հատոր

15 Ղրշ .

Հանրակառքին Ոճիրը

5 Ղրշ .

Ամուսնութիւնք Բարիզու

5 Ղրշ .

Քաղաքական Տնտեսութիւն . Ժողէֆ Կառնիէ

5 Ղրշ .

Գ. ԶՈՐԵԱՆ ԵՒ Ս. ԳԱԼՈՒՍՏԵԱՆ

Դաւառացիներուն .— Եթէ կը փափաքիք որ տեսնուին Ձեր առեւտրական , կալուածական եւն. եւն. գործերը՝ փորձառու և վստահելի գործակատարի մը միջոցաւ , առիթէն օգտուելով դիմեցէք վերոյիշեալ հասցէին «Կ. Պոլիս Էթմէքճի Կոօտ Խան» ուր կը կատարուին ամէն կարգի վաճառքներու ինչպէս նաեւ կալուածներու գնման կամ վաճառման յանձնարարութիւններ , հշդապահութեամբ , փութկոտութեամբ : Յաճախորդներու հաշուէն միանգամայն կը գնուին (ներածութիւն) եւրոպական վաճառքներ , պատկանեալ նաւահանգիստը յանձնելի փոխարժէքով , ու կը վաճառուին (արտածութիւն) տեղական բերքեր՝ իր տեղը կամ այլուր յանձնելի պայմաններով : Խիստ դիւրամատչելի պայմաններ : Ընդարձակ տեղեկութեանց համար դիմել վերեւի հասցէին :

Ք Օ Պ Ր Ա

Կենցաղագիտութեան էտիան պահանջներէն մէկն է կօշիկները ներկուած պտտիլ միշտ , ոչ թէ փողոց ներկել տալով զանոնք , այլ տունէն դուրս ելած ատեն իսկ՝ նախապէս անձամբ կամ սպասուհիին միջոցով ներկել տալով : Այս նպատակին համար ամբողջ աշխարհի մէջ լաւագոյնը հռչակուած ներկն է՝ ՔՕՊՐԱՆ , զոր կարելի է գտնել ամէն տեղ :

Ատանայէն կը գրեն. — «Հայ-հռոմէական եկեղեցիէն հեռանալով Մայր-եկեղեցիի դիրիւ վերադարձող Տ. Պօղոս վրդ. Գոլյումճեանի վեղարի օրհնութիւնը կատարուեցաւ: Առաջնորդը կատարեց վեղարի տուուչութիւնը: Նորեկ վարդապետը կարգաց իր ուխտագիրը: Մայր Մաշտոցէն երկար աղօթքներ կարդացուեցան նորեկ վարդապետին զլիւռն վրայ և անցուեցաւ վեղարը՝ անորձլուիւր և շուրջաւոր կոնակը»:

— Իզմիրի մէջ տեղի ունեցեր է երկսեռ վարժարաններու նպաստին սարքուած երեկոյթը: Փետր. 22ին տեղի ունեցեր է Սբօրթինի-Քլիւպի թատրոնին մէջ Կրթասէր Ընկերութեան Մանկապարտէզի նպաստին նուագահանդէսը: Օր. Ա. Պարտիզպանեան և Տիար Ա. Բէթիօ մենախօսութիւններ արտասաներ են: Օր. Կիւլա Զաքեան երգեր է և Տիար Ստեփան Էլմասեան՝ դաշնակահար մը՝ Շօրէնի, Շուպէրի մէյմէկ կտորներէն զատ՝ իր հեղինակութիւններէն 4 կտոր ածեր է դաշնակի վրայ:

— Տարտանշլի երկսեռ վարժարանին քառամսեայ քննութեան աւելթով հանդէս մը տեղի ունեցեր է Տ. Բարթող քահ. նախագահութեամբ, և ներկայութեամբ ի մէջ այլոց Թաղ. Խորհուրդի ասենապետ Մանուկ էֆ. Առաքելեանի, տտենադպիր Թադէոր էֆ. Փափաղեանի, Զրաաթի չրջանաւարտ Արմենակ էֆ. Տայեանի ևն.: Վարժարանին անօրէն Ռուբէն էֆ. Երէցեան տեղեկագիր մը կարդացեր է որուն յաջորդեր են զուարճալի ատենաարանութիւններ և ոտանաւորներ: Աղջկանց վարժարանի դաստիարակ-ուսուցչուհին՝ Օր. Սիրանոյշ Պաղտասարեան հրաժարելով՝ պաշտօնի կոչուեր են Վարժարանին նախկին չրջանաւարտուհիներէն Օր. Հռիփսիմէ Յարութիւնեան և Օր. Վերգին Պէրպէրեան:

«ՄԱՍԻՍ» Ի ՀԱՐՑՈՒՄ ՆԵՐԸ

Մեր Գ. Հարցումին տուած պատասխաններէն կը հրատարակենք հետեւեալ երկու ամէնէն արամիւսները, որոնցմէ առաջինը կը շահի մրցանակը, 100 դեղատիպ այցաքարդ, շահողին անունով:


Թիւ 1. — Պիտի ուզէի աղջիկ ծնած ըլլալ հետեւեալ պատճառներով. — 1. — Մինչդեռ երիտասարդները ձանձրանալի են, աղջիկները սիրելի՛ կ'ըլլան «աւելի» ու... լուացքի:

2. — Մինչդեռ աղջիկը երիտասարդը առնելու համար անոր մարդ ըլլալը կը պահանջէ, երիտասարդը... ճիշդ անոր հակառակը:

3. — Մինչդեռ աղջիկը զինքը գնահատողներու կողմէ մինչեւ երկինք կը բարձրանայ, երիտասարդը պարտաւորուած է ամէն օր գետնին տակը անցնիլ... չուկայ երթալու համար:

4. — Առաջ երիտասարդներն էին միայն որ կրնային կի՛ն ունենալ, մինչդեռ հիմա աղջիկներն ալ:

5. — Երիտասարդ մը ամուսնանալու համար շատ բանի կը կարօտի, մինչդեռ աղջիկը միմիայն... նարօտի: Թակոթ ճօջօղեան



ԾԱԲԱԹԱԹԵՐԹ

ԱԶԳԱՅԻՆ, ԳՐԱԿԱՆ, ԳԻՏԱԿԱՆ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ

ՏՆՕՐԷՆ՝ ԽՄԲԱԳԻՐ
ԵՆՈՎՔ ԱՐՄԷՆ

55ԴԴ ՏԱՐԻ. ՆՈՐ ՇՐՋԱՆ

ԹԻԻ 16

10 ՄԱՐՏ 1907

ԱՆՇԵՏԱՑՈՂ ԴԵՄՔԵՐ

ՏԻԳՐԱՆ ՃԻՎԷԼԷԿԵԱՆ

Մահերու այն երկար շարքին մէջ, որ հանրային դործունէութեամբ, նշանակելի դէմքով և ծանօթ անուններով անձնաւորութիւններ մենէ կը բաժնէր սա քանի մը շաբաթներուն մէջ, Հայ լրագրական աշխարհի դործիչներէն մէկուն՝ Տիգրան Ճիվէլէկեանի մահն ալ գուժուեցաւ փետրուար 13ին:

Իր անունը լրագրութեան տարեգրութեանց մէջ յաւիտենապէս մնալու նախասահմանուած է, քանի որ անիկա կապուած է երկու թերթերու, որոնցմէ մէկը քսաներկու իսկ միւսը ութը տարիներէ ի վեր կը հրատարակուին: Ճիվէլէկեան գործի մարդ մըն էր. սակայն պիտի տարակուսնիք զինքը լրագրական գործի մը համար գործի մարդը կոչելու, վասն զի ամէնէն էական ուժը՝ գրիչը կը պակսէր իրեն:

Ատիկա ալ իր պատճառները ունէր:

Ինչպէս սովորաբար դիտուած է, Հայ Հռոմէականներու տուններուն մէջ մայրենի լեզուն չի խօսուիր: Կեսարացիները նոյնպէս առհասարակ թրքախօս են. Ճիվէլէկեան որ թէ կեսարացի էր և թէ Հայ-Հռոմէա-

կան, բնական է թէ ինք ալ մայրենի լեզուն անգիտակ էր նախապէս, և յետոյ իբր օտար լեզու դաշն ուսած էր Վիկննայի Միթթարեանց Բան-կալթիի նորաբաց վարժարանին մէջ, ուր ուշակերտած է Այոթնեանի պէս հայագէտի մը. սակայն իր հայերէնը չէ կրցած այնքան զօրաւոր ըլլալ, թէ եւ իր ժամանակակից կեսարացիներէն շատ ազէկ կը խօսէր հայերէն՝ երբ պէտքը ներկայանար:

Դպրոցական շրջանը աւարտելէ վերջը, նախ առեւտրական գործերով զբաղած է, յետոյ Անտոն Սագայեանի հրատարակած Միշնոս անուն զաւեշտաթերթին նիւթական մատակարարութեան գործին մասնակցած է: Ատիկա իր լրագրական կեանքին մէջ մուտքն է: Իր շրջանակը և իր յարաբերութիւնները յետոյ նպաստեցին որ օրէ օր աւելի միջամուխ ըլլայ գործին, մանաւանդ որ օրուան լրագրական պայքարները և առօրեայ նիւթերը այն ատեն լրագրական տոպարէզը տեսակ մը նախանձնի գործ դարձուցած էին և՛ շահու և առաջդիմութեան յոյսեր կուտային:

Տիրբան ձիվէլէիկեան թերեւ այս պարագաներէն հրապուրուած մխրճուած է այդ ասպարէզին մէջ, մինչ զուցէ իր կոչումը աւելի ուրիշ էր:

Վարդան փաշա (Ծն. 1813 Սեպ. 26 և մեռած 1879 մարտ 28.) ժամանակին Հայ-Հռոմէական հոտարակութեան ամէնէն ուսեալ և կարեւոր անձնաւորութիւններէն մէկն էր, որ պետական կարեւոր պաշտօններ վարած է և իր կեանքին վերջերը ինքզինքը խմբագրութեան տուած է: Իր հասարակութեան գործերուն ոգևորութեամբ խառնուած է և այն ատենուան գլխաւոր մտադրադումներէն մէկը եղող Հասունեան վէճերուն մէջ ինքը կը դանուէր Հասունեանց ջոջերու շրջանակին մէջ: Միւս կողմէ իր գրական նախընթաց գործերը իրեն ապահոված էին համբաւ մը, որ օրուան լրագրական շահագրգռական նիւթերուն պատճառաւ աւելի մեծ կարեւորութիւն կը ստանար: Վարդան փաշա իր այս հանգամանքովը ուղեց առիթէն օգուտ քաղել՝ հրատարակելով քաղաքական օրաթերթ մը: Ատիկա Հասունեան կամ Հակահասուն օրկան մը չպիտի ըլլար, այլ հանրութեան ամէն դասակարգերուն և ազգին ամէն հաստուածներուն ուղղուած ջրագիր մը, որ պիտի բաւականանար օրուան լուրերը տալով և քաղաքական աշտութիւններ և անտեսական յօդուածներ հրամցնելով: «Հոգ պիտի տարուէր որ, կ'ըսէ Քէչեան (տես Բիւզանդիոն Ա. տարի թիւ 8) թերթին գլխաւոր խմբագիրին հասարակական-եկեղեցական գործերու մէջ ունեցած մասնաւոր հայեացքները որ և է ազգեկցութիւն չունենան իր գրելիքներուն վրայ»: Այդ մասին հսկելու հոգ յանձնուած էր այդ տողերը դրող երիտասարդ խմբագրին, վասն զի «կը խորհուէր թէ Վարդան փաշայի բնզուն և անհամբեր գրելը կրնար յանկարծ շատ հեռուն տանիլ զինքը»:

Այս ծրագիրը գործադրելու համար Վարդան փաշա վարձեց Գէորգ Այվազեանի Մամուլ զաւեչտաթերթը և զայն փոքր դիրքով թրքաբարբառ օրաթերթի վերածեց։ Թերթին վարչութեան մէջ էր Անտոն Ալիք, որ թերթին մատակարարութիւնը կը կատարէր, և Քէչեան՝ որ լուրերու խմբագրութիւնը կը վարէր։ Վարդան փաշայի այս ձեռնարկը փայլուն ընդունելութիւն գտաւ, հակառակ բազմաթիւ մրցակիցներու՝ 2000 չափ սղառում ունենալով օրական, ինչ որ իրմէ առաջ միայն Փանոսեանի Մանգուլէն միջոց մը (1871) ունեցած էր։ Սակայն Վարդան փաշա Մամուլի ռամիկ անունին և երբեմնի հակահասոտնեան ընթացքին համար հաշտ չէր և կ'ուղէր թողուլ զայն։ հետեւեալը վարձեց Ալիքեան Սադայեանի Թերճիւմանը Էփեարը՝ որ 1877 Սեպտեմբեր 10էն հրատարակուիլ սկսաւ իրր քաղաքական օրաթերթի։

Տիրգրան ձիվէլէկեան, որ Սադայեաններու հետ յարաբերութեան մտած էր Միւնսի հրատարակութեան առթիւ և տպարանի մը աչր դարձած էր, իրր Հայ-Հռոմէական նոյնսլէս յարաբերութիւն ունենալով Վարդան փաշայի հետ, Թերճիւմանը Էփեարի մէջ մտաւ իրր հաշուակալ և քանի մը տիւս ետքը եղաւ Տնօրէն-Մատակարար, մինչ Վարդան փաշա, Ալիք և Քէչեան կը մնային իրենց սղաշտնին վրայ։ 1877ին Վարդան փաշայի մահէն յետոյ մինչև 1879 յունուար 1, Բիւզանդիոնի Տէր և Տնօրէնը կատարեց ձիվէլէկեանի տնօրէնութեամբ հրատարակուած Թերճիւմանի մէջ այն դերը՝ զոր Վարդան փաշա կը կատարէր անկէ առաջ։

Անկէ ետքը, ալ ձիվէլէկեանի գլխաւոր աջակիցը եղած են իր հայատառ թուրքերէն թերթին մէջ Անտոն Ալիք, Քերովլէ Լիմանճեան և ուրիշներ, որոնց օժանդակութեանը անհրաժեշտ սլէտք ունէր, ինք զուրկ ըլլալով անձնապէս գրական կարողութիւններէ։ 1885ին կը յաջողի իր իսկ պատասխանատուութեան տակ հրատարակելու ձերիսէի Շարգիյէն, զոր մինչև իր մահուան օրը հրատարակեց կատարեալ յարատեւութեամբ մը։

Շարգիյէի սկզբնաւորութեան օրերէն իրեն խմբագիրները եղան Ալիքէ և Լիմանճեանէ զատ՝ Պետրոս Աղա Ռեան (ո'չ դերասանը) և Սիմոն Ամիրայեան, իսկ վերջին տարիներու մէջ հոն գրիչ չարժեցին գլխաւորարար Արիկ Մուպահեանճեան և Յակոբ Վարժապետեան, սպտահական քանի մը յօդուածագիրներու օժանդակութեամբ։ Նոյնսլէս Սուրհանդակը՝ որուն հրատարակութեան ձեռնարկեց 1893 մարտ 9էն, ուրիշներու խմբագրութեամբը հրատարակած է միշտ, և իր դերը անոնց մէջ շատ սահմանափակ է եղած։

ձիվէլէկեանի իրր վարիչ ունեցած կարողութիւններուն վրայ խօսելէ առաջ հոս կը փորձուինք մէջ բերել նախապէս իրեն գործակից և յետոյ լրագրական ասպարէզին մէջ քով քովի գործող Բիւզանդիոնի Տէր և Տնօրէնին մէկ տեսութիւնը (Տես. Բիւզանդիոն, թիւ 20), որ ունի իր յատուկ շահեկանութիւնը։ Ահա թէ ի'նչ կ'ըսէ Քէչեան.

«Տիգրան ձիվէլէկեան մեծ դրագէտ մը չէ։ Խորունկ ուսումնական-
 նութեան յաւակնութիւններ ալ չունի։ Քսան սարի առաջ լաւ հայերէն
 ալ չէր գիտար թերեւս։ Բայց ազէկ հաշիւ գիտէ և վարչական մարդ
 է։ ... ձիվէլէկեանի դործնական ձիրքերը մեծագէտ նպատակներն թեր-
 թին տեւականութեան։ Մեր հայատառ թուրքերէն ղլխաւոր թերթը՝
 Մանգուռէի Էփեսար, որ երբեմն այնքան մեծ տեղ մը լռեցած էր Հայ
 Մամուլին մէջ, որուն Տէրն ու Տնօրէնն ալ երբեմն ազգային-վարչական
 աստղաբէզին մէջ, այնքան ազդեցիկ անձնաւորութիւն մըն էր, այսօր (1896)
 դադրած վիճակին մէջ է, ոչ միայն Փանոսեանի անձնական տկարութեան
 պատճառաւ, այլ և ժողովրդային քաջալերութիւնը պակսած ըլլալուն
 համար։ Քիչ վարպետութիւնն պէտք էր մեզակից քեթքը պահպանել
 կարենալու համար։ Որքան ժամանակ որ վարդան փաշա կը գրէր Թեր-
 ճիւղանի մէջ, զարմանք չէր որ այդ թերթը կարենար մրցիլ Փանոսեանի
 թերթին դէմ։ Բայց վարդան փաշայի մահէն ի վեր իր թերթին անխա-
 փան տեւականութիւնը ձիվէլէկեանի ճարտարութիւնը կը ցուցնէ և կը
 հաստատէ թէ մարդ կարող է թերթ մը վարել առանց ինք հոգակուած
 դրագէտ մը ըլլալու»։

Սակայն ներուի հոս ղլտել տալու թէ եթէ պարագայ մը կայ որմէ
 ամէնէն աւելի տուժած է ձիվէլէկեան, անիկա ալ գրական աշխատու-
 թեանց իր անդնդունակութիւնն է։ Իրեն վերագրուած դործնական ձիր-
 քերը կեսարացիներու առանձնայատուկ յատկանիւններ են։

ձիվէլէկեանի ալ բոլոր ձեռնահատութիւնը այս կէտին մէջ կը կայա-
 նայ։ Իր կեանքը ծայրէ ծայր պայքար մը եղած է։ Չէ եղած չըջան
 մը ուր ձիվէլէկեան մրցակից մը չերեւակայէ իր դէմ և այդ ոգւով չի
 խորհի։ վարչական ձիրքեր ունեցող մարդ մը, նոյնիսկ իր գործին
 առաջըլիմութեան համար պէտք է որ ինքզինքը որքան յարգելի նոյն-
 քան ալ սիրելի ընծայել գիտնայ իր ստորագրանքներուն, վասն զի ճշմար-
 տութիւն մըն է թէ երբ պաշտօնեաներ կը սիրեն իրենց քաթրոնը,
 իրենց աշխատութեանց մէջ անձնութիւն կը դնեն և գործին առաջ-
 դիմութիւնը մէկ աստիճան աւելի կ'ապահովին. իսկ ընդհակառակը
 դժգոհութիւնը և տհաճութիւնը կը խանգարէ գործին զարգացումը և
 անոր անկմանը պատճառ կ'ըլլայ։ ձիվէլէկեան դժբաղդաբար չէր կրցած
 իր շուրջը համախմբուած անձերը ամուր կերպով մը իրեն կապել,
 վասն զի գործատէրին և աշխատողին մէջ եղած կապերը աւելի
 պղտիկ ու բծուն հաշիւներու և վարուելու տարբեր ձևով մը վրդով-
 ուած էին։

Հաշիւի մարդը՝ վարչական մարդուն կը վնասէր, որով կը խանգար-
 ուէր այն ճշգրտագնութիւնը, զոր մանաւանդ լրադրական գործի մը մէջ
 անհրաժեշտ է որ ունենան թէ՛ գործին տէրերը և թէ՛ իրենց ստորա-
 դասները։ Հաշիւի մարդը՝ նոյնպէս ջնջած էր իր մէջը գաղափարին

մարդը. Վարդան փաշայի օրերէն մնացած աւանդութեամբ մը, որուն շահաբեր ըլլալուն համազրուած էր, իր թերթը կրօնական համոզումներու օւկան չըրաւ: Այս սկզբունքը իր ամբողջ կեանքին մէջ կրցաւ պահել: Մանաւանդ Սուրհանդակի մէջ չէ կարելի տող մը ցոյց տալ՝ ուր կրօնական տարբեր յարաւանութեան մը ի նպաստ գրուած ըլլայ:

Ասկէ դուրս որոշ գաղափար մը չէ ունեցած իր լրագրական կեանքին մէջ: Իր թերթերը իրեն չափ ալ խմբագիրներուն ազդեցութեանը համաձայն վարուած են: Ասով հանդերձ չատ անգամ ալ տուժած է իր ձեռնարկներուն մէջ, աշով առածը ձախով կորսնցնելով, վասն զի իր թերթերը յամբար ինկած են իրենց փայլուն վիճակէն, յաջողութեան միակ գաղտնիք ընթերցող չկորսնցնելու վարպետութիւնը ունեցած չըլլալուն համար:

Երկրասարդութեան օրերուն մէջ իրաւ է թէ միեւնոյն ընթացքով չէ շարունակուած իր թերթը և անիկա իր անյաջողութեան շրջանները ունեցած է, սակայն ինք կրցած է կուրծք տալ նիւթական դժուարութեանց և դարձեալ վերականգնիլ. վերջին անգամ չկրցաւ դէմ դնել այն հոգեւ կան տազնապին՝ որ իր աշխատութեամբը կանգնած գործին նիւթական միջոցներու պակսելովը տկարանալուն հանդիսատես կ'ընէր զինքը և ընկճուած կը գամէր անկողին, ուրկէ այլեւս չսլտի ելլէր:

Ուրիշներ՝ թերեւս եթէ իր տեղը ըլլային այնքան չտազնապէին եւ չձուլէին. սակայն ձիվէլէկեան պաղարիւն մարդ մը չէր:

Միւս կողմէ, չմոռնանք ըսելու թէ՝ ձիվէլէկեան իր արտաքին յարաբերութիւնեանց մէջ զիտէր կենցաղագիտութիւն դնել. ընկերական մարդ էր, և ունէր իր գործին պահանջած ձիրքերը ու յատկութիւնները: Գործնական ըզի, կամք ու յարատեւութիւն ունեցած է: Մանաւորապէս իր յարատեւութեան ոգւովը և օսմանեան մամուլին մատուցած ծառայութեանցը համար գնահատուած է Օսմանեան Կայսերական Կառավարութիւնէն «Միւթէմայիզ»ի աստիճանով եւ Օսմանիէ և Մէճիաիէ պատուանշաններով, ինչպէս նաեւ Ճեփիսէի Շարգիյէին յատկացած է ամսաթոշակ կառավարութեան կողմէ: Իբր ընտանիքի պետ՝ անձնուէր հայր մը և կստարեալ ամուսին մը եղած է, ինչպէս կը վկայեն իր տնական կեանքին մօտէն ծանօթութիւն ունեցողները, որոնց չհաւատալու պատճառ մը չունինք. այլ ընդհակառակը չատ մը ապացոյցներ և հաւաստիքներ որոնց ակնատես եղանք մանաւանդ իր ազջիկ դաւակներէն մէկուն հիւանդութեանը պարագային՝ կը հաստատեն այդ բանը: Իր մահովը լրագրական աշխարհէն կամքի տէր և յարատեւող ձեռնարկու մը կ'անհետանայ:

Ասիկա պատուաբեր նիշ մըն է իրեն համար, և մանաւոր տեղ մը կուտայ իրեն մեր լրագրութեան պատմութեան մէջ, ուր նշանակելի դեր մը կատարած կրնայ համարուիլ:

ԱՐՇԱԿ Ա. ԱՂՊՈՅԱՃԵԱՆ

ՖՈՒՆԱՄԱԿԱՆ ԳՐԱԿԱՆՈՒԹԵԱՆ ԴԷՄՔԵՐ

ՌԷՄԻ ՏԸ ԿՈՒՌՄՈՆ

Ֆուանսական գրականութեան symboliste (խորհրդանշանական) դպրոցը, որ յաջորդեց Պառնասին, (Parnasse), այսինքն Ֆուանսուա Քօփէի սերունդին, արուեստի ու բանաստեղծութեան նորուք բողբոջում մը եղաւ։ Այս վերանորոգումը, որուն ռազմիրանները կը համարուին Վիլլիէի տը Լիլ Ստան, Վէպլէն, Մալլարմէ, — անխուսափելի պէտքի մը պահանջում կուտար։ Անիկա կը զիպէր այն տեսակ ժամանակի մը, ուր գրասէր դասակարգը զըռած էր ալ քնապաշտութեան (naturalisme) աղբաւնոցէն, և չափազանց ժողովրդային ու նոյն իսկ այլ ևս քիչ մը ռամիկ կը գտնէր Քօփէի մը չափաբերուած պատմութիւնները։ Բնապաշտ վէպը, իր գարշամոլ ակտրիսաներով ու Պառնասեան ռոմանսորը՝ իր անոգի արուեստամոլութեամբ, բերանիովսի մը անհրամշտ պէտքը առաջ բերած էին։ Մտքերը անհանգիստ էին վարդապետական կապանքներու, դպրոցական տարադներու սեղմումին մէջ, և արուեստը՝ պէտք ունէր խորտակելու խանձարուրին պատասնները։

Այդ պահուն, ճիշդ ու ճիշդ պաշտօնական գրականութեան քովը ծաղկեցաւ գրական անկախ սերունդ մը, symboliste դպրոցը, իր անհամար պղտիկ անկախ հանդէսներով, որոնցմէ ոմանք, ինչպէս Ermitage, Mercure de France, ևն. ցարդ կ'ապրին ու խիստ ուշադրաւ դիրք մը կը զբաւեն, արդի գրական հրապարակին վրայ։

Բայց symboliste, խորհրդանշանական անուանումին մէջ ստուգաբանական իմաստ մը պէտք չէ փնտռել, ինչպէս կը կարծեն ոմանք։ Բոլոր գրական դպրոցներու անունները տառական իմաստով նկարագրիներ չեն թարգմաներ։ Անոնք պարզապէս կը ծառայեն գրական շրջանները իրարմէ զանազանելու, ինչպէս՝ Ռոմանթիսմ, Պսուդաւ, Նաթիւռալիսմ, ևն։ Գրական դպրոցները կը ծաղկին ու գոյութիւն կ'ունենան միշտ իրր ընդդիմութիւն այլ ևս շատ մասնաւորութեամբ ու հինցած գեղեցկութեան մը։ Իբր այդ միայն կարեւոր են անոնք։ Ուստի և՛ խորհրդանշանականութիւն, symbolisme ըսելով պէտք չէ հասկնալ թէ նոր գրականութիւնը խորհրդանշաններու լեզուով միայն կը խօսէր։ Խորհրդանշանական դպրոցը կը յատկանշուի մանաւանդ՝ իբր ընդդիմութիւն նաթիւռալիսմին (naturalisme, բնապաշտութիւն) ու Պառնասին (Parnasse)։ Իր յատկանշիներն են՝ արուեստի ազատութիւնը և իմաստասիրական գաղափարապաշտութիւնը, (idéisme)՝ որ, ինչպէս շատեր կը կարծեն, բնաւ չի նշանակեր գաղափարներ պաշտելու կամ գաղափարներու համար միայն դրելու տեսակ մը աւելի կամ նուազ տարտամ և ուռուցիկ ձգտում, քանի որ առանց գաղափարներու՝ որ և է ճշմարիտ գրականութիւն չէր

ունենար արդէն: Symboliste դպրոցին ընդգրկած գաղափարապաշտութիւնը՝ իմաստասիրական գաղափարապաշտութիւնն է, (Պղատոն) որ ի հեճուելս նիւթապաշտութեան՝ (matérialisme) տիեզերքին կոռտայ գաղափարական ու ենթակայական իրականութիւն մը միայն: Այս ձգտումը ֆուանտական նոր մտքին մէջ՝ գերման աղբիւր ունէր, և գրեթէ անմիջականօրէն կուգար Ծօրէնհառէրէն: Սեմյօզիսմի նորութիւններէն է նաև ազատ ոտանաւորը, vers libre, որ ֆուանտական գիւտ մը է, այլ ունի ամերիկեան ծագում և կուգայ Վալթ Հուայթմէնէն:

Տողորում այս տեսակ նորամոյժ ձգտումներով, որոնց մասին թերևս առիթ ունենամ ուրիշ անգամ աւելի մանրամասն խօսելու, սեմյօզիսի դպրոցը ցոյց տուաւ բոցեռանդ գործունէութիւն մը: Արձակադիրներ, ինչպէս Բօլ Ատան, Մօսիս Պառէս, Մէթէուլինք, Բէլատան, չվարանեցան ինքզինքնին օճակէն դաւանելու, բայց մանաւանդ բանաստեղծներու գեղեցիկ բոյլ մը յատկանշեց ու բեղմնաւորեց այս դպրոցը: Մալլարմէ, Սամէն, տը Ռէնիէ, Մուէաս, Վէռհառն, Ռէթթէ, Լուի Լը Բառտօնէլ այն տեսակ անուններ են՝ որոնք ալ անջնջնելի հետք մը թողած են մատենագրութեան մէջ:

Անո՛ր այս իրարմէ բոլորովին անկախ նկարագրով արուեստագէտներէն բաղկացած խումբը իր մէջ կը համրէ տարօրինակ արձակագիր մը, — իսկատիպ գեղեցկութեամբ մեծ իմացականութիւն մը, — Ռէմի տը Կուռմօնը (Remy de Gourmont): Եթէ ամէն գրական դպրոց իր քննադատն ու պատմաբանը կ'ունենայ, սեմյօզիսմի քննադատն է Ռէմի տը Կուռմօն: Այսինքն՝ ինք բանաձևած է, գրական քննադատութեան ու պատմութեան տեսակէտէն, սեմյօզիսմին գեղեցկագիտութիւնը:

Անշուշտ, Ռէմի տը Կուռմօնի միակ կամ նոյն իսկ լաւագոյն արժանիքը է աս: Եզական հարստութեամբ ու անօրինակ բեղունութեամբ իմացականութիւն մըն է ան, — հաւասար նշանակութեամբ քննադատ, վիպասան, բանաստեղծ, փիլիսոփայ, գիտուն, պատմագէտ, բանասէր, լեզուագէտ, — կրկնաւորումով՝ մեծ ու անթերի արուեստագէտով մը: Յօժարակամ սլիտի ընդունէի զինքը իրր տեսակ մը ժամանակակից Վոլթէ, որուն կը նմանի բաղմաթիւ տեսակէտներէ, և որմէ բոլորովին տարբեր է սակայն, ուրիշ բաղմաթիւ տեսակէտներով:

Ռէմի տը Կուռմօն խիստ տարօրինակ ու խորհրդաւոր գրագէտ մըն է: Մենասէր մը, գրեթէ վանական ու ձգնաւորական մարդ մըն է, որ հեռու կ'ապրի ընկերութենէն, անոր փառքերէն ու աղմուկներէն, զորս այնքան տղայական ու անամէջ կը նկատէ: Իմաստութեան ու գիտութեան չափազանցութիւնը արդեօք զօրացուցած պիտի ըլլան իր հոգիին անդգամ ոչնչակամութիւնը, (կամ թէ՛ ոչնչապաշտութիւնը), ըստ Ժողովողին: Զուտ, բացարձակ ուղեղային մը, մտաւորական (intellectuel) մըն է ինքը: Ո՛չ կը խնդայ, — որովհետև խնդալը մտքի պարապութիւն

կ'ենթադրէր, — ո՛չ կուլայ, — որովհետեւ լայքը այնքան կանացի է. և ո՛չ իսկ որ և յուզումնական ղեղում ներկելի կը դանէ ինք իրեն: Անշուքած հետաքրքիր մը, խորաթափանց դիտող մը և անազորոյն տրամաբանող (logicien) մըն է, որ իբր ամէն դիմագիտական արտայայտութիւն՝ հաղիւ թէ նշմարելի ժպիտ մը ունի իր ցուրտ նայուածքին մէջ: Այս ժպիտը բարենշան չի թուիր սակայն: Իր ապրելու եղանակին մէջ այս գրեթէ վարանոտ, զգուշաւոր ու մեծապէս խոհեմ մարդը, որ իր ժամանակակից իմաստունի անյաղթելի ու մեծ դիւրազգածութիւնը աշխարհիկ ուսմութիւններուն կոպիտ հանդիպումներէն փրկելու համար որոշած է առանձին ապրիլ, իր մտքին կործանարար և անխալտոյս եղրակացութիւնները ամօքելու և իր եսասիրութիւնը փրկագործելու համար՝ որոշած է հեգնել: Ո՛չ ցնորքներով կը սնանի, ո՛չ բարեգուշակ ու միսի թարրար երազներուն կը հաւատայ: Ո՛չ պատրանքներ ունի, ոչ յոյսեր: Բայց հաղիւ թէ յոռետես մըն է: Վասնզի ատ իր կարգին պիտի ըլլար՝ անձնական եղանակի մը տալ բացարձակ ու տիեզերական նշանակութիւն: Փիլիսոփայական դրութիւնները զլիսաւորաբար չե՞ն մեղանչեր անձնական տեսակէտներու համեմատ: Ռէմի տը Կուռմօն ատիկա շատ լաւ գիտէ: Բայց իր մտքին ձգտումները և իր տրամաբանութիւնը յայտնապէս ոչնչապաշտ են ու անբարոյապաշտ (immoraliste): Իր հոգին՝ ձիննապատ լերան մը կատարին վեհապանծ ցրտութիւնը ունի: Ու քանի որ ինքնամոռաց մանկութեան մը միամտութեամբ չի կրնար խնդալ, և քանի որ դառնակսկիծ յուսահատութեան մը նուաշտութեան մէջ անկարող է լալու, իր անհնարին ուրախութիւնները և իր աններելի արտմութիւնները սքօղելու համար՝ մերթ կը ժպտի, թեթեւօրէն, որպէսզի դուք երբեք չկարենաք գիտնալ թէ՛ կը հրճուի՞ ան, թէ՛ կը տրտմի:

Հեղնութիւնը (ironie) այն յատկութիւնն է՝ զոր ունենալ՝ կը նշանակէ գերազանցօրէն տէրը ըլլալ իր անձին, — իր բոլոր ձիրքերուն: Բնաւ ներկելի չէ յուզումնալից դէմքի մը ալպանութիւնը: Մեծ ու հզօր նկարագիրները միայն կարող են այդ բանին: Ուրեմն ոչի՞նչ կայ քաղցրիկ, ոչի՞նչ կայ միսիթարար, ոչի՞նչ կայ կազդուրիչ՝ այս անողոր իմաստունին քով:

Հազուադիւրս պայծառութեամբ իմացականութիւնն է Ռէմի տը Կուռմօն: Բաւական է որ անիկա, այդ իմացականութիւնը, ճառագայթէ, լուսաւորելու համար բոլոր անգունդները և բոլոր մթութիւնները: Իր ամբողջ գրականութիւնը մտածմանց լուսաւոր ճառագայթումներու արշալոյս մըն է միայն: Ռէմի տը Կուռմօն՝ բանասէր է, քերականագէտ է, գիտուն է կամ վիպասան՝ միեւնոյն իմացական ոսկեղին իկ յատկութիւններուն համեմատ: Իր պարբերութիւնը, կոկ և կուռ, անխտիր ու անսպառ ոսկերչութիւն մըն է: Տը Կուռմօն կը բանի դայն,

ոսկերչական թանկագին ֆապը, այն մեծ ու անթերի արուեստով, որով գլխե բանիլ իր կիրքերն ու իր մտածումները: Ահա գրագէտ մը, որ դասական լեզուով մը կրցած է ամէնէն խկատիւ, ամէնէն տարօրինակ անհատականութիւն մը թարգմանել: Իր ոճը՝ ջինջ, յղկուած, մաքուր, մագիստրոսական արուեստի մը կնիքը կը կրէ, և արտայայտութիւնն է տարօրինակէս ճոխ և օժտեալ խառնուածքի մը: Բոլոր հմտութիւններով ու բոլոր գիտութիւններով սնած այս միտքը ոչինչ ունի անհանդուրժելի և կանխամտորէն հմտական, այսինքն պատուելիական: Հեռի՛ ատկէ: Վասնզի տը Կուռմօն մեծ արուեստագէտ մըն է: Իր բոլոր զգացողութիւնները ու բոլոր մտածումները անակնկալ նորութեամբ փոխաբերութիւններով ու պատկերներով կ'արտայայտուին: Այս բազմերես հառուածակողմը՝ իսկատիւ գեղեցկութեամբ պրիմալուսներ կը ցոլացնէ: Ոչինչ տափակ, հասարակ կամ ռամիկ է իր մօտ: Իր բոլոր էջերուն մէջ, վէպ, քննադատութիւն թէ բանասիրութիւն, գաղափարներու և մտածումներու անթիւ փոստեռաներ կը թռչտին, որոնք խորհուրդին ստուերը կ'ոսկեղօծեն և ճշմարտութիւնը կը լուսաւորեն: Ռէմի տը Կուռմօն, ինչպէս հեշտ է հետեւցնել իր խառնուածքին ու մտքին վրայ տրուած ծանօթութիւններէն, աղնուապետական մը և անհատական մըն է (individualiste): Ճշակի ու ախորժակներու այս մաքրութիւնը ու նրբութիւնը՝ դրօշմ իսկ է իր գրականութեան: Ինք՝ կ'ատէ արուեստին ժողովրդականացման նուաստացողիչ գաղափարը, զոր խակ ու անմիտ կը գտնէ: Եւ ասիկա այն իրաւամբ որ, ժողովուրդը, որ արուեստի գործին մէջ առ առաւելն զգացումներ միայն կարող է տեսնել, աւելի կամ նուազ հասարակ ու անընդունակ է հասկնալու ձեւը, — իսկութիւնն իսկ արուեստի գործին:

Ռէմի տը Կուռմօն՝ նրբամոլ ու վերլուծական միտք մըն է: Բոլոր համադրական կառուցումները ընդհանրապէս խարխուլ յատկահիւսք մը ունին իրեն համար: Ուստի և՛ իրեն համար գերազանց հաճոյք մըն է ցոյց տալ մեղի բովանդակ անվաւերականութիւնը մեր շատ մը սիրական ու նուիրական ճշմարտութիւններուն: Շատ մը կազմ ու պատրաստ գաղափարներ, բազմաթիւ հնաւանդ սրբազան ճշմարտութիւններ են՝ որոնք մեր իմաստասիրական ու բարոյական ըմբռնումներուն Պանդէոնը կը ճոխադարձեն: Մենք՝ կ'ընդունինք ու կը պաշտենք մեր բոլոր աստուածները, առանց վայրկեան մը պէտքը զգալու անոնց ծագումներուն ծանօթութեան: Բայց ահա՛ տարօրինակ մարդ մը, որ անսովոր կերպով հետաքրքիր է և ամպարիշտ կասկածներ ունի: Անիկա չի բաւականա՜նար միայն կասկածելով: Անիկա կը բանաձևէ իր կասկածը: Բոլոր աստուածները ձոյլ միութիւններ չեն: Գաղափարներու ղուգորդութեան մը հիւսքին վրայ կը քանդակուին անոնք: Հիւսքին մեքենականութիւնը կը խուսափի մեր ուշադրութենէն: Սրբ, Ռէմի տը Կուռմօն ինք իրեն

հաճոյքը տուած է հիւսկէնները քակելու՝ կտիմ առ կտիմ, երեւան հանելու համար յօրինուածքին բովանդակ խորհուրդը: Եւ ահա կը կը տապալին անոնք, աստուածները, իրենց հինաւուրց պատուանդաններուն վրայ, և անոնց անողոք կործանարարը, իրը ամէն դոհուհա կութիւն, ժպիտ մը միայն ունի իր շրթունքներուն վրայ: Ռէմի տը Կուռմօն իմացական այս գործողութիւնը կ'անուանէ՝ *dissociation des idées* — կազմալուծութիւն գաղափարներու: Իմացական անօրինակ կորու վով մը և մեծ ճկունութեամբ մը առաջ տարած է իր մտքի այս խորագինն սովորութիւնը: Հոս ոչ մէկ պատուարի առջեւ կանգ կ'առնէ: Մտածման աղատութիւնը ոչ մէկ անգամ կարելի է աւելի տիրական ձեւի մը ներքեւ ի գործ դնել: Ու կը մաղէ ան, բարակ, նրբամաղ, մինչեւ վերջին հողի փոշին: Ի՞նչ փոյթ եթէ մաղին մէջ բան չէ մնացած: Բայց այդ չէ՞ դերադանց խղճամտութիւնը: Ինչո՞ւ կարծել թէ հողին մէջ ոսկիի կտորուանքներ պիտի գտնուէին: Ինչո՞ւ խաբուիլ, նուաստօրէն ու վատօրէն: Հոս՝ տը Կուռմօն կը նմանի Նիշէին, երբ ան փորձեց, աննախորդ յանգձնութեամբ տրամաբանութիւնով մը, *une dépréciation de toutes les valeurs*, — վարկաբեկութիւն մը բոլոր արժէքներու:

Բայց այս ցուրտ մտաւորականը, որ միեւնոյն ատեն գեղեցկին հեշտամոլութեամբ համակուած զգացողութիւն մըն է, ամենուրեք յագուրդ կը վնասէ իր նրբախոյզ ճաշակներուն: Այդ է պատճառը որ իր կեանքի դրուագները՝ տարօրինապէս հեշտամոլ և զմայլելի կերպով մերկապաշտ բնազդի մը պանծացումն են, ամէնէն աւելի: Ապրիլը՝ բնազդներու խորձ մըն է: Ինչո՞ւ կեղծաւոր բարոյապաշտութեան մը համեմատ՝ նուիրապետութիւն մը հաստատել այդ բնազդներուն մէջ, և անոնց մէջէն նուաստացնել զայն՝ զոր հեթանոս հնութիւնը զիտցաւ փառաւորել ու հռչակել անկորուստ արուեստով մը, կենսալիր ու համարձակօրէն հեշտասէր: Վասն զի միակ նպատակ մը կայ կեանքին մէջ. «պահպանումն իսկ կեանքին» սիրոյ միջոցաւ, ու «սէրը խորապէս կենդանական է. և ատով իսկ գեղեցիկ»։ Նիշէն անուանեցի, ու պէտք էի չմոռնալ, թէ Զարադուստրան արժանապէս տպաւորած է ֆրանսացի խորհողը:

Որքան կը յիշեցնէ զայն, իր խստամբեր ու քնրախրտ մտաւորականութեան մէջ: Քարսիրտ՝ բայց ոչ չարսիրտ: Ի՞նչ հեղնական թրծում պէտք է ունեցած ըլլայ մարդ, կարենալ ըսելու համար Զարադուստրային հետ. «ան որ կը սաւառնի ամէնէն բարձր լեռներուն վերեւ, կը խնդայ տեսարանին ու կեանքին բոլոր ողբերգութիւններուն վրայ»:

Ոչ մէկ բանէ խաբուելու, ոչ մէկ պատրանքէ հրապուրուելու, ոչ մէկ ակարութենէ պարտուելու զիջանող այս մարդը, ինչո՞ւ կը գրէ ուրեմն: Դրե՛լ. ինչո՞ւ խաբուիլ այս փառասիրութենէն: Դրել՝ չի՞ նշա-

նակեր խօսիլ. ու խօսիլ՝ հաղորդակցիլ: Զարագուստրան մարգարէ՝ մըն էր, որ օր մը լեռնէն վար իջաւ, ժողովուրդը ուսուցանելու համար: Խօսեցա՛ւ, խօսեցաւ. չէին հասկնար ըսածը. յետոյ՝ դառնօրէն զղջաց: Բայց Ռէմի տը Կուռմօն՝ մարգարէ մը չէ: Նախազգալով թէ՛ օր մը իրեն կրնայ հարցում ուղղուիլ այդ մասին, տեղ մը ըսած է. «J'écris pour clarifier mes pensées». — Ի՞նչ մեծսիրտ ու հպարտ խոնարհամտութիւն:

Ու, «պայծառացնելու համար իր մտածումները», գրած է, կը գրէ, դեռ պիտի գրէ: Ռէմի տը Կուռմօն որ հազիւ այսօր քառասունեկնը տարեկան է, երեսունի մօտ հատորներ արտադրած է արդէն: Մե՛ծ բեղունութիւն:

Կը հիանամ այս ազնուապետական ու խրոխտ իմացականութեան վրայ: Իր անողոք, կարծր բայց ջղուտ իմացականութիւնը կը յանկուցանէ զիս: Վասն զի ճշմարիտ է ան. վասն զի՝ խորապէս անկեղծ է ան. և վասն զի՝ Ռէմի տը Կուռմօն՝ ժամանակակից Փռանաական գրականութեան մէջ զարմանալի դէմք մըն է, խորթափանց, պայծառատես ու նրբին խորհող մը՝ երկրորդում խիստ մեծ արուեստագէտով մը:

ԱՐՏԱՇԷՍ ՅԵՐՈՒԹԻՆԵԱՆ

ՅԻՇԱՏԱԿՆԵՐԷՍ

«ԱՇՈՒՂ»Ը, Յ. ԶԻՆՃԻՐՃԵԱՆ, ՅԱԿՈԲ ՈՍԿԱՆ

Ե.

Եթէ Ոսկանի խօսակցութիւնը բեղուն էր անեփոքներով, նոյնքան յուռթի էր այդ մասին նաև Զինճիրճեանի ասուլիսը: Ան ալ ապրած մարդ էր, և շատ նշանաւոր դէմքերու ծանօթացած էր իր բազմախառ կեանքին ընթացքին՝ սկսելով Մահմուտ փաշայի իր առաջին գրատունէն մինչեւ Եիւքսէք Քալաբըրժի այդ կրպակը՝ որուն զրան վրայ օր մը իր մահազգը պիտի կարդայինք: Իր հեգնող, խճճասէր ու խայթող լեզուն՝ չեղած տեղը կրնար հնարել ալ՝ երբ խօսակցութեան միջոցին նշանաւոր մարդու մը անունը կը գրուէր մէջտեղ: Եւ որովհետեւ ընդհանրապէս Տէրոյենցի վրայ կը խօսուէր, գլխաւորաբար ա՛ն պատուածակ կը դառնար իր հեգնութեան:

— Բայց չէք գիտեր թէ որքա՛ն խաւարամիտ մարդ էր, ըսաւ օր մը այցելու բարեկամի մը, ձեզի բան մը պատմեմ ու դատեցէ՛ք...

Եւ ահա թէ ի՛նչ պատմեց:

Պոլոտյ չեմ գիտեր ո՛ր կողմը՝ Եւրոպացի ամուլ մը ճամբան կը կոր-
անցնէ, և բազդը անանկ կը բերէ որ իրենց հանգիստող առաջին մարդը
նոյն ինքն Տէրոյնցը ըլլայ:

Էրիկմարդը՝ ներողութիւն խնդրելով, իրենց այցելելիք տան ո՛ւր
գտնուելը կը հարցնէ պատուելին: Տէրոյնց կը պատրաստուի պատաս-
խանելու, բայց տակաւին բերանը չբացած՝ կնոջ մանքօն կը սահի, և
ահա՛ երկու հոյակապ ու հոլանի ուսեր երեւան կ'ելլեն, — գրգռոտ ու
նազելի կարապներ՝ որոնք կարծես խուսիլ կ'ուզեն մետաքսեայ *սեֆօրթե*
չփակի մը կապանքէն:

Կ'երեւայ թէ պարահանդէսի մը կամ երեկոյթի մը կ'երթային:

Տէրոյնց սրտնեղութեան ու նողկանքի շարժում մը կ'ընէ, և
տալիք պատասխանը փոխելով՝

— Հրամայէ՛ք, այս կողմէն կ'ըսէ, աջերնուդ վրայ գտնուող առա-
ջին փողոցը կը մտնէք, յետոյ դէպ ի ձախը կը դառնաք, և ճակատը
գտնուող դուռը կը դարնէք:

Եւրոպացիք շնորհակալութիւն կը յայտնեն, կը հետեւին իր ցոյց
տուած ուղղութեան, և կատարեալ ապշութեան մը կը մատնուին՝ ինք-
զինքնին դէմ առ դէմ գտնելով... բաղնիքի մը հետ:

Մարդիկը անշուշտ բան մը չեն հասկնար այդ կատակէն, բայց իթէ
բաղդը զիրենք անգամ մըն ալ Տէրոյնցի դէմը հանէր և անկէ բացա-
տրութիւն խնդրէին, ապահովաբար՝ հետեւեալ պատասխանը սլփտի տար
իրենց.

— Զըպրախ մարդը տունը չի վայլեր, բաղնիքը կը վայլէ...

* *

Ահաւասիկ ուրիշ մըն ալ՝ դերասանական կեանքէ:

Եօթնամանական թուականներուն՝ Վարդուխան դերասանուհիի մը
պէտք կ'ունենայ Կէտիք Փաշայի Օսմանիէ թատրոնին համար, և այդ
մտքով ծանուցում մը կուտայ մեր թերթերուն: Թատերախումբին երի-
տասարդ անդամներէն մէկը, — որ կանուխէն հրաժեշտ տուած է բեմա-
կան կեանքին և ուրիշ ասպարէզ մը ընդգրկած, — առանց Վարդուխ-
անի գիտութեան ինքզինքին հիւրամեծարի դեր մը կուտայ և ներկա-
յացող աղջիկները կ'ընդունի՝ տակաւին քննութեան չենթարկուած: Մեծ
մասը՝ մօր մը կամ ազգականի մը հետ կուգան, բայց օր մը՝ ճշմար-
տապէս հրաշագեղ աղջիկ մը մինակը կը ներկայանայ, և իր գեղեցկու-
թիւնը ա՛յն աստիճան վրդովիչ աղղեցութիւն մը կ'ընէ որ երիտասարդ
դերասանը չի զիմանար և աղջկան վզին կը փարի հաղար ու մէկ
փաղաքիչ խոստումներով:

Աղջիկը կը պոռայ, իրարանցում մըն է կը փրթի, ուրիշ դերասան-
ներ վրայ կու գան, և խնդիրը բերնէ բերան արձագանգ գտնելով
մինչեւ Վարդուխանի ականջը կը հասնի:

Այն ատեն՝ ժողովուրդը ընդհանրապէս չատ խոռ աչքով կը նայէր թատրոնին եւ գրեթէ լնաւ հաւատք չունէր անոր բարքերուն մաք-
րութեան մասին։ Մեծ զգուշութիւն պէտք էր, որովհետեւ այդ բարո-
կան ըմբռնումը կրնար նիւթական յիւստի մը ծնունդ տալ, և թատերա-
պետ մը, շատ պատճառներ ունէր նիւթական յիւստէ մը զգուշանալու
համար։ Վարդովեան՝ խնդիրը լսելուն պէս՝ շունչը թատրոն կ'առնէ, և
աղդու օրինակ մը տալու համար՝ նոյն ինքն անարգութեամբ աղջկան ներ-
կայութեան կը սկսի յանդիմանել յանցաւորը։ Բայց այս վերջինին
խելքը միտքը միշտ աղջկան վրայ է, և աչուըններէն՝ իգամոլիկ ըզձանք-
ներով յղի ակնարկներ կը մեկնին շարունակ ու զայն կը պաշարեն։

Այս անտարբերութիւնը աւելի կը կատարեցնէ հանգուցեալ թատերա-
պետը։ Պահ մը՝ համբերութիւնը ընդունողին կը հատնի, և երիտասարդին
օձիքէն բռնելով՝ կը թոթուէ ու կը պոռայ։

— Ինծի չնայի՛ս, պատին չեմ խօսիր կոր... սա ըրածդ նայէ մէյմը,
այսչափ տարուան թատրոնիս պատիւը մէկ փարայի ըրիր...

Միւսը դարմացկոտ նայուածք մը կը թարթէ Վարդովեանի վրայ,
կարծես ըսել կ'ուզէ թէ արդեօք իրա՞ւ իրեն կ'ուղղուին այդ յանդի-
մանութիւնները։ Յետոյ, առանց ուրիշ խօսքի միջոց տալու, ուսերը կը
ցնցէ անխուժօրէն, ու գուրս կ'ելլէ՝ բարձրագոյն ձայնով մը հետեւեալ
քառուկը կը գրելով։

Կիւն որ չունի
Սէր ի սրտի՝
է քնար ոսկի
Առանց քելի։

Այլեւս անգամ մըն ալ թատրոն չդառնար։

Եւ մանրավէպին ամենէն զուարճալի կողմը սա է որ ժամանակ մը
վերջ՝ այդ միւսնոյն բեմախոյս երիտասարդը կ'ամուսնանայ... իր համ-
բուրած աղջկան հետ։

* *

Զինճիրճեանի մահը պատճառ եղաւ որ այս բոյնը քանդուի։ Գրա-
տուն յաճախող տղաքը, մեծ մասամբ գործի տէր դարձած, ցրուած
էին։ Ես ալ լրագրութեան մէջ մտած ըլլալով՝ այնքան քիչ ազատ
ժամանակ ունէի որ հազիւ քանի մը ամիսը անգամ մը, ան ալ ղիպ-
ուածով, Աշուղին կը հանդիպէի։ Խեղճ մարդը երթալով կ'իշխար։ Գրա-
տան այցելուները, — ընդհանրապէս Զինճիրճեանի բարեկամներ, —
ցանցառած էին, գրադարաններու խորշերը պարպուած, և այդ տխրա-
բոյր միայնութեան հուսկ յետին պահապանը նորէն քանդու վար առած
էր պատէն, կ'երգէր ու կը նուագէր, իր երբեմնի վշտերուն և հիասթա-
փութեանց յիշատակները կ'անթեղէր և անոնց ցաւովը կը կոտորար։

Օր մը կրկին խան հանգիստը ըլլալով՝ Աշուղը չգտայ: Յաւագին կասկած մը սիրտս պրկեց, կարծեցի... բայց ի՞նչ պէտք ըսելու: Բարեբաղդարար՝ կասկածս շուտ փարատեցին: Աշուղը չէր մեռած, թէև մահը՝ քանի մը անգամ մօտէն, գրեթէ քսուելով, բարեւած էր զինքը: Ոչ գիրք կար, ոչ ալ գրատուն: Ամէն բան ցրուած անհետացած էր կարօտութեան անողոր հովէ մը, և երբեմնի իմացական վառարանէն ոչ իսկ աղիուն կայծ մը կը մնար այլևս:

Ինչո՞ւ Աշուղ: Զինքը գտայ ողորմելի սենեակի մը մէջ, հին ու մին քուրջերով լեցուած աղտոտ անկողնի մը վրայ, հազիւ թէ ծածկուած քուրձէ պարկերու կոյտի մը տակ: Հիւանդ էր, տակաւին կը սրտփար անտանկի տենդով մը, և յաճախ դողը ա՛յն աստիճան կը սաստկանար որ կարծես թէ ոսկորները իրարու կը բաղխէին ու կը շաչէին:

— Սնցա՛ծ ըլլայ, առ ի՞նչ վիճակ է, հարցուցի քարացած:

— Սո՛ւս, մի՛ հարցնէր, մնջեց անզօր ձայնով մը, և նշան ըրաւ որ նստիմ:

Աթոռ չկար, ծալլապատիկ բոլորուեցայ անկողնին քով, և այն ատեն միայն նշմարեցի թէ գլխուն տակ՝ հին վերարկուի մը մէջ փաթթուած քարիւղի թիթեղեայ աման մը միայն ունէր իւր բարձ:

— Աշո՛ւղ, առ ի՞նչ է հարցուցի նորէն:

Բատմնեցոյցի՜՜՜ անմուսնալի պատմութիւն մը պիտի լսէի այն օրը:

— Երկու երեք չարաթ առաջ, խանին տէրը, — կարծեմ յոյն բժիշկ մը, — զինքը նեղը կը դնէ խանութին վարձքին համար: Աշուղը դրամ չունի, հիւանդ ալ է, քիչ մը ժամանակ կը խնդրէ իր պարտքը վճարելու համար, սակայն բժիշկը մտիկ չընէր: Գրեւոր կը զրաւուն և Աշուղը կը ստիպուի այդ խոնաւ ու մթին սենեակը քաշուի իր ֆանոնին հետ՝ զոր իւր շնորհ իրեն թողած էին: Այնտեղ՝ հիւանդութիւնը աւելի կը սաստկանայ և մտածեցէք թէ ի՞նչ զարհուրելի բան է այդպէս հիւանդ անկողին իյնալ առանց բժիշկի, առանց դեղի, առանց դրամի, մանաւանդ առանց հացի...

Իւր ամբողջ հարստութիւն միայն իր ֆանոնը ունի, բայց ան իր մխրթարութիւնն է, իր սիրտանքն ու երջանկութիւնը: Կարօտութեամբ ու թշուառութեամբ փոթորկած ծովի մը մէջ՝ միակ յուսատու փարոսը որ տակաւին կրնայ փրկութեան յոյսի մը երանագին գրգիռը տալ իրեն: Երկու օր կը դիմանայ անօթութեան, բայց երրորդ օրը կը պարտուի, կը կքի այդ նոր բեռին տակ, և լալով կը բաժնուի իր սիրելի ընկերէն որ տարիներու ընթացքին մէջ միակ հաղորդակիցը եղած էր իր վշտութուն, որ իրեն հետ մէկտեղ լացած ու խնդացած էր, որ կրցած էր զինքը մխրթարել՝ մինչև անգամ այն պահերուն՝ երբ աշխարհք ու մարդիկ ոչ իսկ ամենաանշան սիրտներ մը կը հայթայթէին իրեն:

—Ի՞նչ ընելու միտք ունիս, հարցուցի իրեն՝ երբ այս ցաւադին սլատմութիւնը աւարտեց :

—Մէ՛յ մը ելլեմ անկողնէն, անկէ անդին կրնամ նոր խանութ մըն ալ շտկել :

Այս եղաւ իր պատասխանը :

* *

Եւ իրա՛ւ ալ շտկեց : Ամիս մը վերջը, կրկին իր առջի խանութը հաստատուած էր, և տարօրինակ բան որ դրադարանները նորէն լեցած էին ամէն տեսակ գրքերով, միշտ երբեմնի բաքելոնական թոհն ու բոհը կը տիրապետէր այնտեղ, ոչ իսկ նստելու տեղ կար, որովհետեւ՝ դրադարաններէն յորդած գրքերը ո՛չ միայն ակթոնները բռնած էին, այլ նաև տախտակամածին մեծագոյն մասը կը ծածկէին : Մարդն ալ հին «բարեաց պարգեւիչ»ն էր միշտ, դարձեալ դպրոցականներուն մխիթարութիւն և քաջալերիչ դարձաւ : Անգամ մը կործանած էր այդպէս անհաշիւ բարիք սերմանելուն համար, և այդ անցեալին յիշատակը ո՛չ միայն չէր կասեցներ զինքը, այլ կարծես դրդիւ մը կը դառնար որպէս զի աւելի անսկստ կերպով մը իր գրքերը ձրի բաժնէ հանդիպողին :

Եւ պատահեցաւ՝ ինչ որ պիտի պատահէր : Տարի մը վերջը՝ կրկին ընկճուած էր սլատքերու տակ, կրկին գրքերը դրաւ և զինքը դուրս նետած էին : Ո՛վ դիտէ՝ թերեւս հիւանդ ալ պառկեցաւ և անօթի մնաց, բայց ամիսը չանցած՝ նորէն վերածնած ու նոր դրատուն շտկած էր ապրեցուցիչ՝ ու նոյն ատեն պաշտելի յամառութեամբ մը :

Տարիներ կար որ զինքը չէի տեսած՝ երբ առջի օր իրեն հանդիպեցայ դարձեալ Եիւքսէք Բալաբըրժի վրայ, յոյն պոլիէիսթի մը խանութը :

— Ի՞նչ դործ ունիս այստեղ, հարցուցի զարմացած :

Տարաբաղդ մարդը անգամ մըն ալ կործաներ էր, բայց այս անգամ՝ վերածնունդը յապաղած ըլլալով, ստիպուեւ էր այդ խանութը ապաստանիլ : Ամբողջ օրը կ'աշխատէր այնտեղ, գիշերն ալ պահնորդութիւն կ'ընէր առանց վարձատրութեան, մի միայն գիշերէ գիշեր գլուխը դնելու տեղ մը ունենալու համար : Այլևս հաւատք չունէր իր վրայ յոգնած ու ծիւրած էր :

— Կարծեմ թէ վերջինն է աս, ըսաւ տխուր ու սրտամարմար ձայնով մը :

Եւ երկար հառաչանք մը արձակեց՝ մինչդեռ երկու կաթիլ արցունք՝ իր թոճկած այտերն ի վար կը սառնէին շատովաւ, կարծես վախնալով որ կը տեսնուին :

Ի՞նչ ըսել կ'ուզէին այդ հառաչանքն ու արցունքները... : Արդեօք դանդաճտ մըն էին լոտոր այն աղոց հասցէին, որոնք երբեմն այնքան բարիք տեսած էին այդ մարդէն, և որոնք այսօր, հակառակ դիրքի,

գործի ու շահու տիրացած ըլլալուն՝ զինքը մոռցած էին, կը ձգէին
որ չարչարուի ու տուայտի այդ անյոյս թշուառութեան մէջ:

Արդեօք...: Ո՛վ գիտէ:

Մէկ՝ Աշուղը կրնար լուծել այս խնդիրը հանգոյցը, բայց անոր
սիրտն ալ այնքան բարի էր, որ եթէ հարցնէի ալ՝ կրկին չպիտի ուզէր
պատասխանել...

ԱՐԱՄ ԱՆՏՈՆԵԱՆ

Վ Ե Ր Ջ

ՁԻԻՆՈՏ ԳԻՇԵՐ

Ամբիծ, լուսանիւթ, ըսինքի մը պէս
Լուսինը վերէն կախուեւ է նորէն,
Սնայակառօրէն պրեկտի կարծես,
Ամպէ forսածին քոյլ բացուածքներէն:

Ձիւնը կ'իջնէ վառ յորձերով անցոյր,
Փեքքրօտած բիւր նուրբ շուշաններուն
Թերթերուն վրայ սպիտակաբոյր,
Այս գիւշերային եզակիան պահուն:

Ու ինծի այնպէս կուգայ որ վերէն
Լուսինը ներմակ իր երակներուն
Կարը կը ցօղէ, կը ձիւնէ նորէն,

Ամպէ forսածին բացուածքէն բեկեղ
Հեռաբախտէն դուրս ինկած, սիրուն
Ամբիծ, լուսանիւթ ըսինքի մը պէս:

ՄԵՐՈՒԺԱՆ ՊԱՐՍԱՄԵԱՆ

ՔՐՈՆԻԿ

Յնցուած ու ցաւահար՝ իրականութեան հաւատարի՛մ այն զնահատումէն, որո՛ւն միայն արժանի էր իր նուագահանդէսը, Պրն. Ահարոն Մսրեան բռնուելու է ծիծաղելի մենամոլութենէ մը՝ ինքզինքը պաշտպանել և զովաբանել տալու դիմակաւոր և ինքնակոչ փաստաբաններու, մեղմելու համար տպաւորութիւնը Մասիսի բողազերձ յայտնութեան, ուր կեղծիքը և բարեկամութիւն մուրացուած ձրի գովասանքը տեղ չունէին բնաւ: Ձենք զարմանար. իր դատին մէջ անճրկած մէկը տկարացում մի այդ միջոցին կը դիմէ: Կարելի չէ՝ նաև մեծ կարեւորութիւն մը տալ իր պաշտպաններուն այլընդայլոյ գրուածքներուն, չարժեք. — ա՛յնչափ յափշտակուած են անոնք բարեկամի մը գծալու, զայն à tout prix պաշտպանելու և երեւակայական յաջողութիւններու փառքովը պանծացնելու զինովութենէն: Կարեկցութիւն և զուժ՝ զորձ չունին անկանխակալ քննադատութեան և ճշմարտութեան հետ: Մենք խիղճի պարտք նկատեցինք արձագանգ ըլլալ Մսրեան նուագահանդէսին առթած տպաւորութեան, որ հեռու էր. դժբախտաբար զոհացուցիչ ու ժպտուն ըլլալէ, և աստով թարգմանած եղանք այն զգացումը՝ զոր մեզի հետ կը բաժնէր ներկայ հանդիսական հանրութիւնը: Եւ եթէ չէինք կրնար լուռ անցնիլ իր երաժշտական ձեռնարկին արդիւնքին վրայէն, պատճառը ան է որ՝ արուեստագէտ մը միշտ իր պատկանած համայնքին անունով է որ կը ներկայանայ հանրութեան, աստիճան մը, և իր ձեռք բերած յաջողութիւնը կամ անյաջողութեան արատը կը պատկանի որչափ իրեն՝ նոյնչափ այդ համայնքին: Եւ երբ անխորհուրդ յանդգնութիւն մը՝ ձախողութեամբ պատճառ կ'ըլլայ միջազգային հանրութեան մը առջև, անոր առթած յոռի տպաւորութեան պատասխանատու է մեծ չափով՝ ձեռնարկին զուլի կանգնողը: Ասոր համար՝ չէինք կրնար իր մեղանշանքին անտարբեր մնալ Պրն. Մսրեան սակայն, ծիծաղելի ինքնախաբէութեամբ մը, իրեն առաջնակարգ մտահոգութիւն ու բան գործ է ըրած՝ ասդին անդին հաւաքացնելու թէ՛ իր նուագահանդէսին մասին մեր դատումներուն մէջ՝ ազդուած ենք

իրեն երեւակայական նախանձորդներէ: Ան չէ՛ զգուշացած նաև այդ հաւատքին մէկ արձագանգը սպրդեցնելէ մամուլի մէջ, իր քծնտա սիրաշահութիւններովը յաջողով շահագործել կարգ մը դիւրահաւան ու անձնուէր բարեկամներու թոյլատու պաշտպանութիւնը, մինչև իրեն գործիք ընելու աստիճան, այդ ղերիւն իր ընդունակութիւնը մեծ փորձերով հաստատած ինքնահաւան ոչնչութեան ծիծաղելի տիպար մը^[1] որ անհամար ձակ՝ ճակատաբաց երեւան գալու, կնոջական քղանցքներու ծպտումին է ասպաւինել, ճզգալու համար բոլոր ցնորակոծ բանդագուշանքները իր վրդովուած երեւակայութեան: Դրական ընդդիմաբանութեան մէջ՝ դիմակը à priori մարմնացումն է կեղծիքին, — վատագի տկարի արժանիք, — և անոր քօլածածուկ թերթերուն տակէն արձակուած ո՛ր և է խօսք, ոչնչութեան արժէքին փառք միայն ունի: Դիտել կուտանք Պրն. Մսրեանի որ՝ զգուշանայ հասարակութեան հետ ինքզինքն ալ խաբելու տխուր ունայնամտութենէն: Մենք պէտք չունինք և չենք ունեցած երբեք ազդուելու ուրիշի կարծիքէ, ո՛ր և է բանի մէջ: Ի՛նչ որ կը գրենք և զրած ենք, արձագանգն է միշտ մե՛ր իսկ համագումին՝ ու դատաստանին, և հո՛գելին կ'ատենք մարդու գործիք ըլլալու վարնոց տկարամտութիւնը, զոր Պրն. Մսրեան կրնայ վնասել և շա՛տ աղէկ գտնել ուրիշներու քօլ, ինչպէս մեծ հնարամտութիւն ցոյց տուած է իր այդ հոտառութեան մէջ, սքանչելապէս շահագործելով անսանձ պերճախօտութիւնը քանի մը բարեկամներու, ի նպատանոց և ինքնահոշակ տաղանդի մը: Ասիկա շեշտել կը հարկադրէ մեզ իր այն միամտութիւնը՝ որով իր հանրահաշակ անաջողութեանը միակ քօլամերկ յատուութիւնը եղող մեր քննադատութեան ազդեցութենէն Պրն. Մսրեան կը ճգնի զերծանիլ, ծիծաղելի գիւտ մը ընելով թէ՛ իրեն պաշտօնակից երեւակայական նախանձորդներ աննպատատարաձայնութիւններ կը սփռեն իր շուրջը: Այո՛, կրնան նախանձիլ. բայց ինչո՞ւ կը մոռ-

[1] Պիտի ուզէի՞ք քօլամերկուած նշմարել իր դէմքը. — Արաքսի Խարտեաշեան—Պրն. Յակոբ Տէր Յակոբեան:

Նան Թէ նախանձոտներ բանի՝ մը կը նախանձին: Թող հաստատապէս միտքին մէջ միտէ Պրն. Մարկեան Թէ, համոզում կեղծելու և ուրիշ կարծիքէ ազդուելու սովորութիւնը անձանօթ է մեզի, և Պրն. Մարկեան ինք անձամբ փորձին բաղխեցու մեր այդ նկարագիրին: Եթէ ուրիշին դատաստանէն ու կարծիքէն ազդուող, քննադատութեան ձայնը բարեկամութեան զոհող և մեր խորհածէն տարբեր շարժելու տկարութիւնը ունեցող ըլլալինք, պէտք է ինք հպատակիլ ամենէն առաջ Պրն. Մարկեանի խնդրանքին, երբ մեր Բրոնիսլին հրատարակումէն քանի մը օր առաջ, Տիար Սիմոն Աֆօլէքճեանի հետ կ'այցեկէր մեզի, փայլալիչ փաղարշանքներով սիրաշահելու համար մեր սիրտը ի նպաստ իր երաժշտական ձեռնարկին և խնդրելու որ՝ հակառակ բան մը չգրուի, որպէսզի «անզուգական արուեստագետ»ը՝ «անձանօթ փայծ տաղանդ»ը՝ չյուսահատի, ինքզինքին և իր գործին արժէքին անձնավստահութիւնը ունեցող «արուեստագետ» մը՝ ինչ պէտք ունի այդ նուստատացոցիչ դիմումներուն և խնդրանքներուն Գործը չը՝ խօսք ինքնին՝ երբ խախուտ չէ՝ անոր հիմը, Պրն. Մարկեան չը՝ հաւատարմօք Թէ՝ Եթէ մեր զաւանանքներուն անկեղծ յայտնութեանը անխախտ հաւատացեալ չըլլալինք, կրնալինք շա՛տ աղէկ շահագործել անձին ու գործին անվստահ մարդու իր անարի դիմումը, այն տեսակ միջոցներով, որոնց գաղափիրը աղէկ ուսումնասիրած են պէտք եղած ատեն իրենցինէն տարբեր կարծիքի շեղող լրագրողներ, և որոնց անտեղեակ ըլլալ չթուիր նաև Պրն. Մարկեան: Քանի մը սիրակցորդ բարեկամներու շուրջած անխնայ խնկարկութիւններէն զինովսլէ առաջ, Պրն. Մարկեան և իր ուխտեալ «խաբուսաշ» փառաբանիչները Թող բիշ մըն ալ չեզօր ու անկողմնակալ անհասներու կարծիքը և դատաստանը շօշափեն, և պիտի տեսնեն Թէ՝ իրենց շլմորած երազանքներուն մէջ որչա՛փ հեռու կը մնան իրականութենէն: Ինքզինքը խաբելուն մէջ շահ մը չիկա՛յ: Կը ցաղինք սակայն որ Պրն. Մարկեան այդ տկար արգարացումին կ'ապաւինի: Կը կարեկցինք իրեն և խորհուրդ կուտանք որ՝ չսիրէ իր արուեստագետի յայդդութիւնը և փառքը փնտռել անհաշիւ ու անկշիւ գովաբանու-

թիւններու մէջ, որովհետեւ Եթէ իր երազուած կարողութեան սիրահարներուն պէրճախօտութեան ամբողջ մթերքներն ալ բեմ հանուին, չեն կրնար բռնի վաւերացնել կարողութիւնը արուեստագետի մը՝ երբ չունի անու փախարկի էր որ Պրն. Մարկեան զիտնար ունենալ շա՛տ ճշմարիտ և անկողմնակալ խօսքերէ չայլալելու պաղարիւնը, առիթ չտալու համար մեզի այն տեսակ յայտնութիւններու, որոնց քաջ գիտակ էր: Հիմա, բոլոր ասոնցմէ ետքը, նորի՞ն աղիւթ փաստ պիտի ուզեն նուագահանդէսին ճշմարիտ fiasco մը ըլլալուն: Բայց ի՞նչ պէտք հեռուները երթալու, Քուսկօքերը Թող միտք բերեն, Քուսկօք՝ բը...:

ՄԵՐ ՆՈՐ ԶՐԻ ՆՈՒԷՐԸ

Մասիսի նոր նուէրին նախորդ դիմումը յայտնումը, համայնով կը դիտեմք քե ողջունուեցաւ մեծապէս համակիր ընդունելութիւնով մը և աւժանցաւ խանդավառ գնահատութեան մը, ինչպէս այդ բանը կը հաստատէր թաղմարիւ բարեկամներու եւ ծառիներու անձնակալ յայտարարութիւնը եւ մօտակայ գաւառներէ ստացած մեր թաղմարիւ նամակները: Վստահ եմք Մասիսի այս նոր գոհողութեան գտնելիք ընդունելութեան, նպասակ ունենալով ընթերցողները ճիշտապէս օժտել նուէրով մը, որուն բարոյական արժէքը անփոխարինելի է, իսկ նիւթական արժէքը մօտաւորապէս համահաւասար՝ Մասիսի թաժանորդագիւնի փոխարժէքին, ինչպէս կը դիտեն ուշիմ ընթերցողներ ալ: Եւ արդէն, դիմումը և համագումարը ասոր, միտք բերելով գնահատութեան արժէքը մեր կարողացոյց գոյն գրագիտներուն, բաւականեղծներուն եւ հրապարակագիրներուն 30 գեղասիրտ սակարկելը խստցող ալլալով մը, որուն ամենեւնի համեմատ զին մըն ալ յասկացնելով՝ կարելի չէ 50—60 դր. և վար արժէք մը աւանդել: Այսպէսով, ուրեմն, բաժանորդներու վճարումը դիմումը կը փոխարինուի, այս նուէրով, ամբողջ տարւան մը Մասիսի գոյն, զոր ստանալու իրաւունք ունին հաւասարապէս, փոխան մի միայն 60 դր. ի: Կը հաւատանք որ՝ իմաբարութեան այս մեղմարկը, — որ

մասնաւոր զոհողութեան մը կը հարկադրէ մեզի, զոր սակայն սիրով ստանձնած ենք մեր թաժանորդներուն հաճոյք մը պատճառած ըլլալու համար, — զրգիւն մը պիտի ըլլայ ժամանակին թաժանորդագրուելու **Մասիսի**, տարուան մը բերքի իրաւունքին հետ տիրանալու համար ևս մեր նոր նուիրին, զոր պիտի ստանան մարտի վերջը, որովհետեւ անոր պատրաստութիւնը ժամանակի կը կարօտի: Մեր ակադեմիան պատրաստութիւնը յանձնած ենք արդէն մարտ, շուսանկարիչի մը, որ մեղմարկած է անոր աշխատութեան, գեղարուեստական գեղեցիկ գործ մը մեքսիկո համեմատ խնամքով: Մեր նախորդ ցանկին կցուած պէտք է նկատել Ալպոյանեան Արշակ եւ Թեոդիկ:

ԳՐԱԿԱՆ ԵՒ ԳԵՂԱՐՈՒԵՍԱԿԱՆ

ՍԱՐԱՍ ՊԵՐՆԱՌԻ ԿԵՆՏՐՈՆԷՆ

Սարա Պերնառ Բոնէրվաթուառի ուսուցիչ անուանուեցաւ Ահաւասիկ սիրուն իրողութիւն մը՝ որ առնչութիւն ունի իր հոն առաջին անգամ ընդունուելուն հետ, զոր ժամանակին **Թանի** մէջ նկարագրած է Ֆրանսիսը Սարաէ, Յայնի է Թէ դիւրութեամբ մէկը Բոնէրվաթուառ չընդունուիր, առանց նախնական բնութեան մը, Իւրաքանչիւր ընտրելի կտոր մը կ'ընտրէ և Բենիչ Յանձնաժողովին առջեւ կ'արտասանէ, որ կամ կ'ընդունի և կամ կը մերժէ: Օր. Սարա Պերնառի մայրը շատ բան չէր գիտեր զպրոցին կանոններուն վրայ: Իր աղջիկը Լա Ֆոնթէնի **Մելու Տասրակներ** առակը գիտէր զոց, Խորհեցաւ որ աղջիկը կրնար այդ ոտանաւորով մրցումին մասնակցիլ, Պզտիկ Սարա բեմին վրայ երեւցաւ, բայց հազիւ Թէ սկսած էր արտասանել.

«Մելու տասրակներ զգաւնով
կը սիրէին զիւր.

«Իրենցմէ մէկը սկսաւ բոցին
մէջը ձոնհարմալ:

Երբ Պ. Օպեր ձեռքի շարժումով մը ընդհատեց.

— Կը բաւէ, կը բաւէ, հո՛ս ելուր
աղջիկս:

Սարա մտեցաւ համարձակ և հաստատ թալելով: Վտիտ, տոգոյն աղջիկ մըն էր, երեւոյթով ոչ այնչափ զրաւիչ. բայց իր աչքերը այն խորունկ, յստակ, Թափանցիկ կապոյտը ունէին՝ որ հիւսիսի աղջիկները կը յատկանշէ: Ուշիմութիւնը կը ճառագայթէր դէմքին վրայ:

— Անունդ Սարա՞ է:

— Հրեմյ ես:

— Այո՛:

— Ծնունդով այո՛, բայց մկրտուած եմ:

— Մկրտուած է եղեր, ըսաւ յանկարծ Պ.

Օպեր, իր պաշտօնակիցներուն կողմը դառնալով, Մեղք պիտի ըլլար այս սիրուն աղջկան եմէ մկրտուած չըլլար: Շատ գեղեցիկ կերպով արտասանեց **Մելու Տասրակներ**ը առակը, Պէտք է որ ընդունինք զինքը: Իր գեղեցիկ աչքերուն և իր արծաթային ձայնին առաջին յաղթանակն էր որ կը տանէր այդպէս:

Բոնէրվաթուառի սեմէն ներս մտած էր ալ Սարա հոն առողանուածն ան ուսուցիչ ունեցաւ բրօֆ. Բրօվոն և Սանտոնը: Յարմարագոյն ձեռքերուն մէջ է որ ինկած էր: Այդպէսով՝ բիչ ատենուան մէջ մեծ յառաջդիմութիւն մը ըրաւ: Կատակերգութեան և ողբերգութեան երկրորդ մրցանակներ առնելով՝ կրցաւ Բոնէրվաթուառ մտնել, ուր իր անկախ նկարագիրը չկրցաւ հաշտուիլ խաբէութիւններու և խնդրանքներու հետ: Այնպէս որ հոն բիչ մը մնալէ ետքը, Ժիմնալ Թատրոնը անցաւ և Ժիմնալէն Օպերն, ուր իրեն կը սպասէր իր առաջին յաղթանակը: **Սեցորդին** մէջ Ժանէթ Թոփի գերը, իր առաջին և վճռական ատուածացումը եղաւ:

ԼՈՆԿՖԷԼԼՈՒ ՀԱՐՈՒԲԱՄԵՆԵՐ

Լոնկֆելլօ ամերիկեան գրականութեան մէջ կարեւոր տեղ մը կը զբաւէ: Իր տաղանդը ամէն կողմ ճառագայթած և իր համբաւը արձագանգ գտած է Նոր Աշխարհի ամէնէն հեռւոր երկիրներէն մինչեւ Հին Աշխարհի ամէնէն աննշան տեղերը: Ուղղիկ լինելով Այրվինկի պէս՝ Լոնկֆելլօ հասկցաւ որ իր մտաւորական զարգացումին օրըստօրէական յառաջացումը օտար քաղաքակրթութիւնները ուսումնասիրելուն կը պարտէր: Լոնկֆելլօ ծնած է 1807ին: Մէնի գեղեցիկ

քաղաքներէն մէկուն՝ Բօրմլէնտի մէջ, Հայրը շատ յարգուած և ուսեալ իրաւագէտ մըն էր. քաղաքական մեծ դեր մը ունեցած ըլլալով, փափաքեցաւ որ զաւակը իր գործերուն յաջորդէ, սակայն փորրիկ Ուէտսորթը շատ կանուխէն տարօրինակ հակում մը ունէր զրականութեան. իր հօրը զրադարանին մէջ մէկ կողմ կը նետէր Տայնէսթի և Բէնտլէյններու խառնաշփոթ հատորները՝ Շէյքսպիրի, Միլթընի, Բօրի, Տրայտընի, Օսինի գիրքերը. կարգալու համար Տասերեք տարու եղած ատեն Լոնկֆէլլօ ծածկանունով **Բօրմլէնտ Կէզերի** մէջ իր առաջին ոտանաւորները հրատարակեց. Գոյրը միայն տեղեակ ըլլալով, անհամբերութեամբ կը սպասէին թերթին հրատարակութեան. երբ հայրը սովորութեանը համեմատ թերթը կամաց կամաց կը թզթատէր, երկու տղաքները իրարու ձեռք բռնած յուզումէն կը դողդղային. Ի՞նչ պիտի ըլլար արդեօք անոր վճիռը... Հակառակ հեղինակին անունը չգիտնուին՝ շատ չհաւնեցաւ, և այդ առաջին բնագործութիւնը շատ զոհ չի ձգեց պատիկ բանաստեղծը. 1826ին Լոնկֆէլլօ Եւրոպա ճամբորդելու սկսաւ. Ամէնէն առաջ կ'ուզէր եւրոպական լեզուները կատարելագործել Պօտուան Գօլէնին մէջ. կարենալ դասախօսելու համար, ուր բրոֆէսէօր անուանուած էր. Հալը ելլելով, Ռուէնէն անցաւ, որուն գեղարուեստական և ճարտարարուեստական գեղեցիկ շէնքերը յափշտակեցին իր միտքը. Բարիզ հասնելով խնայասէր և աշխատասէր ուսանողի մը կեանքը վարեց. Օթէյլ, ուր կը բնակէր՝ շատ մը գեղեցիկ նկարադրութիւններ ներշնչեց իրեն. Բայց ամէն պարագայի մէջ Բարիզ շատ խանդավառած չէր գիներ. Յետոյ այցելեց Սպանիա, Իտալիա. Ֆիւմի ճամբով Վիեննա հասաւ, անկէ Բրակա, վերջապէս Տրէզտէ, ուր եկար ժամանակ մնաց և հոնկէ Կէօթինկըն անցնելով՝ լրջօրէն աշխատիլ սկսաւ. Իր այս առաջին ճամբորդութիւնը շատ մը նիւթեր և ուսումնասիրութիւններ հայծայծեց իրեն, որոնք Ամերիկա վերադառնալէն վերջը շատ օգտակար եղան բրոֆէսէօրի ինչպէս նաև զրագէտի իր ասպարէզին մէջ. Շատ

վերջը երկրորդ ճամբորդութիւն մը ըրաւ հիւսիսային Եւրոպայի մէջ. Լոնկֆէլլօ արդէն ծանօթ էր Թեթեւ բանաստեղծութիւններով, երբ 1839ին հրատարակուեցաւ իր առաջին ոտանաւորներու գիրքը, **Վիսերուտն Զալենը** վերնագիրով. Այս հատորը որ քիչ ատենուան մէջ սպառեցաւ, տարօրինակ հետաքրքրութիւն մը առաջ բերաւ. Լոնկֆէլլօի տաղանդը անոր մէջ դեռ իր բարձրութեանը չէր հասած, բայց այդ տաղանդը վերելքի շաւիղին վրայ կը գտնուէր. **Վեղօնները, Սպանիացի Ռուստոլը, Կետնի Սաղմոսագրութիւնը** կը պարունակէն իրենց մէջ հետեւողութիւններէ և գեղեցիկ թարգմանութիւններէ զատ, առաջնակարգ գլուխ-գործոցներ. Լոնկֆէլլօ մասնաւորաբար սիրտեր բարխել տուած է. Ինք եղած է Ամերիկայի առաջին քնարերգակ բանաստեղծը, որուն հարիւրամեակը կ'արձէր որ տօնուէր այնքան շքեղօրէն.

Թարգմ. Ն.

Հաճոյքով կ'ողջունենք երեւումը զրական և բանասիրական աշխատութեան մը՝ որ կոչուած է զոհացում ալու կարեւոր պէտքի մը. Այդ պէտքը երկար ատենէ կը շեշտուէր. — Բաւարանի մը, հայերէն լեզուի բառարանի մը պէտքը. Ահա այդ նպատակը կ'իրականացնէ Սիմոն Գաբամանեանի յօրինած **ՆՈՒ ԲԱՌԱՍԱԳԻՐԻ ՀԱՅԵՐԷՆ ԼԵԶՈՒ** աշխատութիւնը, ստուար, յոգնաւատակ ու կարեւոր գործ մը՝ որուն երեւումը արժանի է շնորհաւորութեան. Գաբամանեանի այս աշխատութիւնը, իբր գեղեցիկ զանազանութիւն, պատկերազարդուած է, և անոր մարքէր ու խնամուած տպագրութեանը ջանք չէ խնայուած. **ՆՈՒ Բաւագիրին** հրատարակիչը, Տիար Ռ. Սաղանեան, շնորհաւորելի ձեռնբեցութիւնը ունեցած է այս ծանրաշխատ գործին հրատարակութիւնը բաղձալի կատարելութիւնով. գլուխ հանելու համար չինայել նիւթական ո՛չ մէկ զոհողութիւն, առանց որուն անկարելի է մէջտեղ հանել նմանօրինակ մեծածախա հատոր մը. **Բաւագիրին**, օգտակար ու կարեւոր աշխատութիւն մըն է, անհրաժեշտ ամէնուն. Կ'արժէ որ ամէն անձ չգրկուի զայն ունենալու հաճոյքէն, խիստ դիւրամատչելի վճարումով մը, 20 դր2.

Հիմնադիր. Կ. Ս. ԻԻԻԻԻԻՃԵԱՆ: Արտատպ. ՏԻԹ. Ե. ՄԱՍԻՍ: Տպագր. ՍԱԳԱՆԱՆ

Թիւ 2. — Չպիտի ուղէի աղջիկ ծնած ըլլալ սա նկատումով որ մինչ-
դեռ երիտասարդին վերջը բարի է, աղչկանք... անք

Փայլակ Գօշանճեան

Դ. Հարցում. — Նշանածնիդ ծովն ե ինկած եւ կը խեղդուի. ի՞նչ
պէտք ե ընեմք. պէտք ե շուռ հանդիսասե՞ս մնալ, քե ծովը նետուիմք:
(Պատասխանները պէտք է կարճ ե սրամիտ ըլլան: Կ'ընդունուին մինչեւ
չորեքշաբթի իրիկուն: Ամէնէն յաջողին նուէր գեղեցիկ թղթապանակ
մը (Բօրք ֆեռլ):

Ենորհակալութեամբ կ'արձանագրենք թէ՛ Տ. Կորիւն վրդ. Եսայեան
տարուան մը Մասիս նուիրեց Մարաշի աղգ. վարժարանին, ուր կը
սկսինք զբիւլ թերթերը առնջին թիւէն:

«ՄԱՍԻՍ»-Ի ՊԱՏԱՍԽԱՆՆԵՐԸ. — Տիար Պ. Մ. Կարապետեան. — Կը
խնդրուի խմբագրատունս այցելել այս օրեր անպատճառ:

ԼՈՅՍԻ ԵՐԵՍ ԿԸ ՏԵՍՆԷ

Մէկը՝ որ երկար ատեն տառապելէ ետքը ակուայի ցաւով՝ զայն
քաշել կուտայ ճարտար ատամնորոյժի մը, կամ արհեստական նուրբ
միջոցներով լեցնել կուտայ ակուսն, կամ զուռօնի մէջ առնել կուտայ,
ա՛լ անգամ մըն ալ երեսը չտեսնելով ցաւին: Խնդիր է սակայն միշտ՝
լա՛ւ, ճարտար ու արուեստին դաղանիքներուն գիտակ ատամնաբոյժ մը
գտնել: Այս նպատակին համար առանց վարանելու ե գո՛հ մնալու մեծ
ապահովութեամբ պէտք է դիմել հանրածանօթ ատամնաբոյժ խաչիկ
էֆ. Ժամկոչեանի, որուն համբաւը ե կարողութիւնը վաւերացուած է
ամէնէն: Դիմել Պահէ-Գաբու:

ԱՐԵՒԵԼՔ

Օրաթերթ աղգային, զրական ե քաղաքա-
կան: — Բաժանորդագրութիւն՝ տարեկան՝
Կ. Պոլսոյ համար 80 դրշ. գաւառներու համար 108 դրշ. ե օտար եր-
կիրներու համար 35 ֆր: Հասցէ՝ Ղալաթիա, Բամանտօ փողոց: ԱՐԵՒԵԼՔ
հրապարակ կ'ելլէ ամէն օր, կէս օրին, խնամեալ բովանդակութեամբ,
ընտիր յօդուածներով, թարմ լուրերով ու նորագոյն տեղեկութիւններով:

Հայ Ս. Եկեղեցիի հաւատացեալ Ժողովուրդին դիւրութեանը համար
մասնաւորապէս՝ Սահակ Ռ. Խանճեանի կողմէ պատրաստուած ամէնէն
ճոխ, ամէնէն գեղեցիկ, ամէնէն ընտիր Աղօթագիրքը, որ իր 700ի մօտ
էջերով կը բովանդակէ բոլոր եկեղեցական արարողութիւնները ե աղօթք-
ները, կը ծախուի ամէն տեղի համար լաթակաղմը 10, ոսկեղօծը 17,
փառակաղմը 25 դրշ.: Դիմել Չարգարեան գրատունները. Կ. Պոլիս
Չաքմաքճլարը, թիւ 24-26: Եւ Բերա Գուլէ-Գաբու, թիւ 695:

ԳՐԱԿԱՆ ԽՆՁՈՅԻ ՍԱՐԲՈՒԱՄ ԶԱՐԴԱՐԵԱՆ ԳՐԱՏՈՒՆՆԵՐՈՒ
ԿՈՂՄԷ՝ ԸՆԹԵՐՑԱՍԷՐՆԵՐՈՒ ՀԱՄԱՐ.— «Բարեկամ ամենեցուն».
Տօքթէօս Յակոբոս Կիրակոսեան. գին 15 դրշ. «Առձեռն Նամականի»
(7): «Նշանագիր հայ. և գաղ. մարքայի համար. Խ. Մ. Թահ-
տաճեան (5) «Թափուք պէտէմէք» Մ. Էմբիան (5). «Լքուած
Բնար» Արտաշէս Յարութիւնեանի (5): «Թէ ինչպէս պէտք է պարել»
Միհրդատ Ն. Պարոնեան (5) «Հիւժախտի դարմանը» Տքթ. Յ. Ա.
Դնաճեանի (5 1/2): «Երջանիկ մարդ մը» Կաթթօն Պէրժըէ (5): «Մանր
ուսմունք երկրագործական տարրաբանութեան և երկրաբանութեան»
Ճ. Ֆ. Վ. Ծօհնաթըն՝ (4): «Րօպէնսօն» (4): «Ժողովրդական Տարեցոյց»
1907 (3): «Քնկեցիկը» (բարոյական լէտ) (2): Այս 12 հատոր վիպական:
առողջապահական, բանաստեղծական ևն. գիրքերը, փոխանակ 60 դրշ.ի
կարելի է ստանալ միայն 20 դրշ.ի փոխարէն Զարդարեան եղբայրներու
գրատուններէն. գումարներու համար 7 դրշ. աւելի, իրր փողի ծախք:
Հասցէ. Զարդարեան Գրատուն, Պոլիս Չափաճըլար, 22—23

Հին ՕՐԵՐ.— ՊՈՒԷՏ ԽԱԶԱՏՈՒՐ ՄԻՍԱԲԵԱՆ ԵՒ ԻՐԵՆ ԺԱՄԱ-
ՆԱԿԱԿԻՅ ԻՄԱՑԱԿԱՆԻՆ ՎՐԱՅ ՀԱՅԵԱՑՔՆԵՐ.— Յ. Գ. Մ.— Այս
կենսագրական բանասիրական գործը, հրատարակուած է Սաքաեան
տպարանէն՝ 140ի չափ Էջերով, գրականութեան վրայ կարեւոր տեսու-
թիւններով: Կը գտնուի բոլոր գրավաճառներուն քով. գին 7 1/2 դրշ.:

ՏՕՔԹ. Ե. ՄԱՍԻՍ

ԲԵՐԱ, ԹԱԳՍԻՄ ՓՈԴՈՑ, ԹԻԻ 12

Ամէն տեսակ ներքին հիւանդութիւններէ դատ, մասնագիր տարար և երկար տարիներէ ի վեր կը դարմանէ ստամոքսի, աղիք-ներու, միզային ճամբաներու հիւանդութիւնները, ջղային տկարութիւնները, հին և նոր դաղիական ախտերը: Այս վերջին ախտերը առանց ստամոքսի խանգարման և նորադոյն մեթոտներով կը բուժէ կարճ միջոցի մէջ: Հիւանդ կ'ընդունի ամէն օր կէս օրէ վերջը: Զորեքշաբթի օրերը միայն ձրի: (8—10)



Անկարելի է որ ընտանիք մը առանց կարի մեքենայի մնայ, բայց էական կէտն է լաւ մեքենայ մը ունենալ, որովհետեւ լաւ մեքենայ մը անթիւ և անհամար ծառայութիւններ կը մատուցանէ, մինչդեռ գէշ տեսակէ մեքենայ մը անվերջ դժգոհութեանց և տաղաւորի աղբիւր մըն է:

Բոլոր աշխարհ գիտէ թէ՛

ՍԻՆԿԵՐ

ՀԱՅԹԱՅԹԻՉ ԿԱՅՍ. ՊԱՆԱՏԱՆ

The Singer Manufacturing Cie.

Ձեռի, ոսկի ու ոսկի եւ ձեռքի միանգամայն մեքենաներ կը գտնուին:

մեքենան լաւագոյնն է՝ այս մեքենան ամէնէն աւելի կատարելագործուածը, հաստատունը և զիւրագործածելին ըլլալուն՝ բովանդակ աշխարհի մէջ ամէն ոք Սինկերի մեքենաները կը դնէ:

Սինկերի մեքենաները կը ծախուին մի միայն Սինկեր Բնկերութեան վաճառատուններուն մէջ՝

ՇԱՐԲԱԹԱՆԿԱՆ
ՄԱՍՆԱՎՃԱՐՈՒՄՆԵՐ

ԿԱՆԱԹԱՆ

ԲԵՐԱ

ՊԱՆԱՏԱՆ

ՍԱՆԻՏԱՐ

1. Մեծ փողոց, Պօն Մառչէի դէմ, 343 և 343.
2. Մեծ փողոց, Կալաթա Սէրայի Լիւէին դէմ,
1. Սինկեր խան, Թիւնէլին ետեւը.
2. Դարաքէօյ, Թրամվէյին կայարանին դէմ.
1. Սուլթան Համամ.
2. Սուլթան Պէյաղլի, Թրամվէյի կայարանին դէմ. 13.

Զարչը Պօյու, Թ. 120.

Դասերը եւ նորոգութիւնները ձրի.

Կատարեալ երազխաւորութիւն:

Մասնաճիւղեր գաւառներու բոլոր քաղաքներուն մէջ:

Սինկերի Բնկերութեան կեդր. վարչատեղին կը գտնուի Բերա, Մեծ փողոց, Թիւ. 343 և 343 կրկին, Սարգիս Պէյ Տիւղօղլուի տունը:

(9—10)

ՄԱՍԻՍԻ ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԵԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ

Պոլիսի և գաղափարներու համար տարեկան

6) Ղրճ

Արտասահմանի

11 Ֆրանք:

Թղթատարութեան ծախքը մեր վրայ:

Բաժանորդները իրաւունք ունին ստանալու մեր պարգեւները, միշտ ձրիաբար, Թղթատարութեան ծախքն ալ մեր վրայ:

Մասիսի բաժանորդագրութիւնը բացարձակապէս կանխիկ է:

Չհրատարակուած ձեռագիրները ետ չեն դարձուիր:

Նամակ կամ որ և է դրութիւն ուղղել առ

ԵՆՈՎՔ ԱՐՄԷՆ

ԽՄԲԱԳՐՈՒԹԻՒՆ «ՄԱՍԻՍ»Ի

Գուրուհուլու խան, քիւ 7, Կալաթա, Կ. ՊՈԼԻՍ

در علمه علمه قورسونهلى فائده نومرو ۷ «ماسيس» غزتمسى اداره فائدهسى

Rédaction de la Revue "MASSIS,"

Nº. 7, Courchounlou Han, Galata.

CONSTANTINOPLE

ԿԻՆԸ

ՆԵՂԻՆԱԿ ԵՆՈՎՔ ԱՐՄԷՆ

ՄԱՍՆԻԼԻՆ ԿԱՐԾԻՔՆԵՐԸ

Այս անգամ պատկանում ենու ամփոփոյնով մը կը ներկայանայ Ենովք Արմէն: Այս գիւտով չէ՛ որ պիտի հաստատէր սա համարները թէ իր գրագրի, Բնասիրոյցի կարողութիւններուն կը միացնէ վիպոյցի-սաղանդը:

Կիւնը բացի իր գրական արժէքէն, սպառնական տեսակետով ալ ուսագրու նորութիւններ կը պարունակէ: Ճանաչաւոր ու սիրուն հասար մըն է, որ փափաք կը ներշնչէ մէկ ծայրէն միւսը կարգալու:

Ենովք Արմէն (Կիւնըին մէջ) կ'զգուանայ այն միւս գրականութիւնէն, կ'զգուանայ անորէն մեծ սենեակներու վարագոյրներուն ետին դաշկացող կեանքէն. իր ուղածը դուրսի կեանքն է, կեանքը, գլխաւորով, առեւիճակներ, իր յորդ այլազանութեան մէջ: Ու նաեւ, իր մօտ փառաբանող մը կայ մարդկային սկզբնական վաղնջական բնագոյններուն, զոր երկինք կը հանէ, գլխաւորով մը: Ենովք Արմէն յստակօրէն sensualiste, զգայական կամ զգայապաշտ է, առանց որ եւ է անպարկեշտութեան:

Անուշտ ամէն գրաւոր պիտի փափաքի ունենայ Ենովք Արմէնի այս հրատարակութիւնը, Կիւնը, գրական գեղեցիկ վայելք մը բնութենէն համար:

Կիւնը, հեղինակին գրչի այդ առաջնեկ զուակը, նորութիւն մըն է իբր յղացում:

Կիւնը իր գրական արժանիքին կը միացնէ սպառնութիւն մը հիմնապէս անքիտիք ու բոլորակն նոր նաեակով, որ կը յայտնէ Կիւնըին համակրելի հեղինակը:

Նիւստաւոր հեղինակը, որուն գրութիւնները այնքան հանոյնով կը կարգաւորին օրաբերքներու եւ պարբերական հանդէսներու մէջ, այս անգամ իր մտածումները խնայողաբար է սիրուն ու կրկին հասարի մը մէջ, որուն սպառնութիւնը, բողոքին ազնուութիւնը եւ գեղեցիկ հաւակը հանոյնը կը պարզեւէ բնութեան ունենալու անկէ հոս մը: Ձեռնապէս լանձնաբարեւի է այս գողցրիկ հասարը:

Իր ընդհանուր հանգամանակով Կիւնը կարգաւորելու արժանի գիրք մըն է լաւագոյն աշխատութիւններէն հեղինակին:

Դին 5 դրուշ, Կը գտնուի ամէն գրականութի քով: